

28 2528
29 2529
30 2530

84
4-79



-
2003

391-99-31

ՎԱՐԴՈ

ԵՐԿՈՒ ՍԵՐ

(ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ)



ՎԱՐԴՈ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱԼՈՒՆՔ» ԼՐԱԳՐՈՑ

1897

713

U

1890 թուականի մայիսին էր . երկսեռ ամբոխը վիստում էր Բաթումի ծովափնեայ պարտէզում . զինւորական նւագախումբը հնչեցնում էր մուզիկը , որի մերժ ալեծում , մերժ մեղմ եղանակները տակնու վրայ էին անում մարդուս հոգեկան ամբողջ աշխարհը : Բաթումի բազմացեղ քաղաքացիք արքայական տօնի պատճառով ուրախանում էին և գւարճանում : Մելամախծոտ դժգոյն լուսինը , այդ երկնային անտարբեր մարմինը՝ մեղմ կերպով լուսաւորում էր զբունողների գւարժ ու խնդուն դիմագծերը . . . և նրա պաշտօղ արարածները , սիրող զոյգերը այսօր այնքան չէին հետաքրքրվում այդ եթերային գեղեցկուհու բանաստեղծական դէմքով . . . նրանք ականջ էին գնում « կանաչ կղզի » վալոր , և ենթարկվելով նրա հեշտալի եղանակի աղղեցութեան՝ անձնատուր էին եղել սիրային անուշ ցնորքներին . . .

Ծառախիտ ճեմելիքներից մէկում, զլուխը
քարչ արած, զբօնում էր երիտասարդ Վաշ-
եանը: Նա մտայոյգ էր, բայց ինչո՞ւ. ի՞նչ ու-

նէր ստածելու այդ միշտ ուրախ , զւարթ ասող-
խօսող երիտասարդը : ի՞նչու նա միայն էր , երբ
նրանից մի քիչ հեռու հարիւրաւոր մարդիկ ըդ-
րունում և զւարձանում էին : ԶԵ՞ որ այդ զբօս-
նողների մէջ՝ վաչեանը տասնեակներով ծանօթ
ունէր և ամէնքն էլ կը ցանկային վայելել նրա
ընկերութիւնը , լսել նրա պարագոկաալ և լուրջ
մաքերով լի խօսակցութիւնը : Անշուշտ այդպէս
լինելու մի լուրջ պատճառ ունէր և եթէ նրա
ծանօթներից մէկը տեսնէր երիտասարդի տնտօ-
վոր լուրջ դէմքը պղտորված և սովորական փայլը
կորցրած աչքերը , կը զարմանար : Որովհետեւ
վաչեանը իրան չէր նմանում . . . անշուշտ նը-
րա ներքին աշխարհում մի խռովութիւն կար ,
եթէ ոչ նա չէր հեռանալ իր սիրած ծովի տ-
փից , այն էլ մի այսպիսի հրապուրիչ լուսնկայ
զիշեր :

Երկար քայլելուց յետոյ՝ վաչեանը զլուխը
վեր բարձրացրեց և նայեց դէպի պարտէզի
դուռը . ըստ երեւոյթին նա մէկին սպասում էր ,
արդեօք կնոջ , սակայն ոչ , վաչեանը դազտնի
ժամադրութիւններ տալ չփառեր . . . Բաւական
ժամնակ նայելուց յետոյ՝ նա մօտեցաւ տերե-
ւախիտ ծառի տակ գտնուած նստարանին և
խոնջացած մարդու նման ընկաւ նրա վրայ . . .
հառաչեց , սկսեց ջղային շարժումներով խաղալ
մօրուքի հետ . և վերջապէս զրեթէ բարձր ձայ-
նով ասեց :

— վա՞ն , ի՞նչու չեկաւ , որոշած ժամը վազուց

անցել է . արդեօք տեղը չը գտա՞ւ , գուցէ նա էլ
ինձ է վնտառում . բոյց չէ , ես նրան շատ պարզ
կերպով բացատրեցի :

Վաչեանը այդ մտմտուքի մէջ էր երբ նրան
մօտեցաւ մի յաղթանդամ , խիտ մազերով ու
յօնքերով երիտասարդ և ձեռքը նրա ուսին զցե-
լով՝ ասեց :

— ի՞ն , վաչեան , ներողութիւն եղբայր , շատ
գործ ունէի , թափառելով հոգիս գուրս եկաւ :

— իսկ իմը՝ սպասելով , ի՞նչ եղար , տնաշէն ,
կիսառըախ , կիսագժգոհ կերպով պատասխա-
նեց վաչեանը :

— վնաս չունի , մինչեւ իմ գալը աւելի լաւ
մտածած կը լինես . անշուշտ այստեղ էլ իմ ա-
ռաջարկութեան մասին էիր մտածում . էն , գու
այն ասա . համաձայն ես . խօսք տալիս ես
միանալ մեզ հետ , աջակցիլ մեր գործին :

— Այս , ամբողջ երեք օր է որ մտածում
եմ . . . Ոսկեան , հիմա էլ մտածում էի . սակայն չեմ
կարողանում որոշում տալ . չեմ հաւատում , եղ-
բայր , հայը իմ աչքում շատ ընկած , չափից
դուրս անբարցյականացած տարր է . չեմ հաւա-
տում որ նա կը կարողանայ ոգեւորվել որ և է
բարձր գաղափարով . . . Հայ և յեղափոխու-
թիւն . . . շատ տարօրինակ , շատ անսովոր
միտք է : Հայը թողնի իր դրամական , չարչեա-
կան գործերը և զէնք վերցնի . . . կոիւ մզէ
կան համար , հայը ազատութիւն , սե-
ազատութեան համար , հայը ազատութիւն , սե-

գրանց համար արիւն թափէ . . . խելքս չէ հաս-
նում, եղբայր . . . չեմ կարողանում հաշտւել
այդ մտքերի հետ :

— Թռ' զ, Աստուած սիրես, Վաշեան, այդ
սովորական խօսքերը, կարծես թէ կրկին Մոսկ-
վայում ես և ուսանողական ժողովում . — հայը
ընկած է, հայը փչացած է, հայը չարչի է :
Մուսանում ես որ նա հինգհարիւր տարւայ ըստ-
րուկ է, այն էլ ու՞մ ստրուկը, Տաճկի . բայց
ո՞վ պէտք է այդ ստրուկ ազգի բարոյականը
բարձրացնէ, ո՞վ պէտք է այդ ստրուկ ազգին
հասցնէ այն վիճակին որ նա զգուի իր անպա-
տուարեր գրութիւնից, որ նա զգայ իր վիզը
քերծող լծի ծանրութիւնը . . . դու, ես և մեզ
նմանները . եթէ մենք այդ ստրուկ ժողովրդի
զաւակներ ենք համարում մեզ՝ ամաչում ենք մեր
ազգի վիճակից . իսկ մենք ի՞նչ ենք անում,
առանց այդ ազգը ճանաչելու, դատապարտում
ենք և բոլորովին մեռած ու անպէտք համարում:
Մի՞թէ յոյները և միւս ստրուկ ազգերն էլ մի
դար առաջ նոյն վիճակի մէջ չէին, ինչ վիճա-
կում ենք այսօր հայերս . ո՞վ այդ ստրուկներին
ոգեւորեց ազատութեան գաղափարով, ո՞վ նրանց
մեռած սրտերում զարթեցրեց դարերով մարած
կրակը . . . երիտասարդութիւնը :

« Անենք և մենք . . . մտնենք հայ ժողովրդի
մէջ, ապրենք նրա կեանքով, ծանօթանանք նը-
րա հոգեւական աշխարհի, նիստ ու կացի հետ և
այն ժամանակ միայն կը տեսնենք թէ նա որչափ

ընդունակ է կռւելու իր անտանելի վիճակը փո-
խելու համար : Այն ժամանակ տանք մեր դա-
տավիճիուր դարերով տանջվող այդ դժբախտ ժո-
ղովրդի համար : . . .

« Զէ եղբայր, դու ժողովրդին չես ճանաչում,
դու կանխսակալ կարծիք կազմել ես միայն քա-
ղաքում ապրող հայ վաշխառուներին, հոգեւո-
րականներին և փչացած տարրը տեսնելով . . .
այդպէս դատապարտել մի ամբողջ ժողովուրդ,
այդ եթէ ոչ երեխայութիւն, գոնէ անխզու-
թիւն է . . .

— Ոչ միայն քո թւած հայ տարրը դիտելով,
ցուրտ կերպով պատասխանեց Վաշեանը : . . .
Զէ՞ որ մեր ջանքերը պիտի լինին տաճկահայի
վերածնութեան համար . ահա այս քաղաքում
հարիւրներով տաճկահայեր կան . դրանք բոլորն
էլ վասպուրականի և Մշի գիւղացիներ են . և
երբ տեսնում ես այդ ընկճած, բթացած գրե-
թէ տնասուն դարձած տարրը, որը իսկապէս
կազմում է հայ ազգի միջուկը, իսկոյն քո բոր-
բոքված ուղեղից փախչում են երազանման մըտ-
քերը . . . այսինքն որ տաճկահայը կարող է
յեղափոխութեան դիմել, կարող է պատեի զգաց-
մունք ունենալ, կարող է երբ և իցէ իր զրուխը
ոտքերի տակ ճզմող թուրք տիրոջ վրայ ձեռք
բարձրացնել . . . Զէ, տարիներով թափառող
մարդը, որը համողված է թէ այնտեղ իր հայ-
րենիքում կին ու երեխաներ քաղցած են և շա-
րունակ քուրտի, վաւաշոտ հարեւան թուրքի,

կնամոլ հայ վաշխառուի անասնական կրքերին ենթակայ , չէ կարող այնքան բարոյական ոյժ ունենալ , որ մի գեղեցիկ օր բորբոքուի ազատութեան ծարաւով և բեռնակրի թամբի , թափառականի դաւազանի փոխարէն վէնք վերցնէ :

— Ե՞ն , սիրելիս , այդ բթացած , անասուն դարձած տարրի արտաքինն ես միայն տեսնում , գրեթէ բարկացած ասեց Ռսկեանը , հապա մըտիր նրա սրտի խորքը , տես ինչ կարօտով է բարախում քո կարծած այդ անզգայ սիրտը . մօտիկ ծանօթացիր՝ տես այդ տարիներով թափառող հայ գիւղացին որչա՛փ հաւատարիմ է հայրենիքում թողած կնոջ սիրուն . . . տե՛ս թէ ինչպէս ամառը արեւի տապից այրւող , ձմեռը ցրտից խաշւող այդ հայ գիւղացին օր սոված , օր կիսակուշտ անցկացներով կոռեկներ է հաւաքում , լիրաներ դարձնում և ուղարկում իր զառամած ծնողներին , իր սրտախորով գժբախտ կնոջ և երեխաներին . . . Զէ , սիրելիս , այդքան էլ վատատես մի լինիր . մեր ժողովուրդը քո կարծածի չափ ընկած և փչացած չէ որ չը կարողանայ ուշքի գալ , նա միայն անկեղծ առաջնորդների պէտք ունի . թողնենք դատարկ խօսքերը և կանխակալ կարծիքները , մտնենք այդ գժբախտ և դարերով հեծող , սակայն դեռ բոլորովին չը մեռած և երկար ժամանակ արհամարված ժողովրդի մէջ . անկեղծ անձնւիքութեամբ աշխատենք նրա վիճակին դարման տանելու թէ խօսքով և թէ գործով և տես թէ

նա ինչպէս կը փոխվի , որչափ կը բարձրանայ և գուցէ գեռ մեղնից էլ առաջ անցնի : . . .

— Համաձայն եմ , ես հայ ժողովրդին այնքան էլ չեմ ճանաչում , մանաւանդ տաճկահային . և ծիշդ է , թէ իբր ազնիւ հայ պարտաւոր եմ մտնել նրա մէջ , ճանաչել և ապա տալ իմ դատավճիռը , սակայն վախենում եմ որ իզուր ժամանակ և եռանդ վատնեմ : Աւելի լաւ չէ՞ լինի որ ես գործէի ինձ աւելի ծանօթ ժողովրդի մէջ և նրա ցաւերի համար դարման մտածողների հետ միանայի . . .

— Սուս , ամօթ է . քո ծանօթ ժողովուրդը Ռուսն է , բորբոքվելով գրեթէ գոչեց Ռսկեանը , ես էլ գիտեմ որ Ռուս ժողովուրդն էլ է տանջվում , թէեւ իր Յարերի ձեռքում , սակայն Ռուսը մեծ ժողործուրդ է : Նա առանց ըեղ էլ շատ հաւատարիմ և անձնուել զաւակներ ունի . վերջապէս նրան օտարից կուլ գնալու վասնգ չէ սպառնում . իսկ հայը փոքրիկ ժողովուրդ է , արդէն շատ տանջված , նա կորչում է , էլ երկար գիմանալ չէ կարող . նրան խեղդում է ֆիզիքապէս աւելի զօրեղ տարրը , խեղդում առանց ձայնի , առանց շշուկի : Զէ՞ որ այն էլ մարդկութեան մի անդամն է , թէեւ փոքրիկ , ընկճած և թոյլ անդամը : Զօրաւորի , կարողի բարոյական պարաքն է թոյլին օգնել . զօրեղը բարոյական պարաքն է թոյլին օգնել . զօրեղը վախ չունէ : Թո՞ղ կոսմոպօլիտութիւնը այնտեղ՝ վախ չունէ : Թո՞ղ կոսմոպօլիտութիւնը այնտեղ՝ հայը հարստահարվում է , բոնարարվում է , արհայը հարստահարվում է , բոնարարվում է , արիւնքամ է լինում , իսկ դու ուզում ես ուսւ ժու

զովրդի համար աշխատել : Ուսւս երիտասարդը մտածում է մեզ վրայ, ֆրանսիացին մտածում է մեզ վրայ . ոչ : Ամօթ է , խելքի գանք . . . նախ մեր քաղաքացիական և որդիական պարտք կատարենք դէպի մեր ժողովուրդը և հայրենիքը , նախ մեր քանդված տունը շինենք . . . հակառակ պարագային մենք վատեր ենք . . . պարտազանց ենք . . . թո՛ղ այդ մորերը , վճռիր գալ մեզ հետ . . . մեր եղբայրներն են մեզ օդութեան կանչում անարդ ցցերի և սիւների վըրայից , մեր քորիբն են մեզ կանչում խեղզուկ ձայնով՝ տաճկական հարէմներից . . . գնանք . . . ժամանակը անցնում է , վերջը արդէն ուշ կը լինի . . .

— Շատ լաւ , իրաւոնք ունիս , ընդմիջեց վաշեանը . ես համաձայն եմ , տալիս եմ իմ պատւաւոր խօսքը : Երբ գնաս Տփխիս տղերանցը յայտնիր , սակայն մի քիչ կուշանամ , կարգադրուելիք գործեր ունեմ :

— Ոհ , հոգիս , կեցցես . բացականչեց Ոսկեանը , ահ , քեզ մատաղ , ուրիշ կերպ էլ չէլ սպասում , գէ եկ , համբուրգինք , շտապում եմ , այստեղի աղաներից մէկի հետ մի քիչ գործ ունիմ , վաղը առաւօտեան շուտով գնալու եմ : Թէ ուզում նս հիմա միասին դուրս գանք պարտէզեց :

— Ոչ , ասեց վաշեանը . մի քիչ զբօսնել ես ուզում :

Իսկան ուստիեւանին անուանականաւում .

նվեցին , Ոսկեանը անցաւ գէպի պարտէզի դուռը իսկ վաշեանը իր ճակատը շփելով սկսեց կրկին շըջագայել մութ ճեմելիքում . . . մի երկու անգամ անցուգարձ անելուց յետոյ՝ անցաւ ծովեղը ճեմելիքը : Արդէն ուշ էր , զբօսնողները ցրվել էին . . . լութիւնը թագաւորում էր ամեն տեղ , երբեմն ծառերի մէջից լավում էին անհանգիսաթոշնիկների ճլվոցը :

Վաշեանը բարձրացաւ բիւֆէտի վերեւում գտնված բարձր պաւելիոնի վրայ :

Վաշեանի աչքի առջևւ բացւեց մի հրաշալի տեսարան . լայնատարած ծովը փռւել էր երկար ու երկար և հեռու հորիզոնում գրկվել երկնքի հետ , ամբողջ տարածութեան վրա ծփծփան ու մանրիկ ալիքները խաղում էին լուսնի մեղմ արծաթափայլ ճառագայթների հետ . այդ ալիքները ամեն մի բանի վայրկեանի մէջ հանդարտ խայտալով գալիս էին ու մեղմ շշուկով և մրմնջով համբուրգում հարազատ ափերի հետ և կարծես ծովային անգունդի մէջ գտնված դազտնիքների մասին՝ փափսում ցամաք երկրի ականջին :

Վաշեանը զմայլված այդ շքեղ ու խորհրդաւոր տեսարանով նայում էր գէպի հորիզօն և կարծես իր վառվառն աշքերով ուզում ծակել հորիզօնը անցնել ծովի այն կողմը , ուր գարերով տանջվում են իր եղբայրները , որոնց համար նա այսօր կճռեց թողնել տուն տեղ , ամեն սիրելի էակ և գնալ զոնէ մի փոքրիկ սպեղանի դնել տառապոդ արիւնակիցների բորբոքված վէրքերին . . .

— Այս , գնալ , մրմնջաց վաչեանը , բաց զլուխը ցնցելով . աչքով տեսնել տանջւող ժողովը դիմին , սեփական ձեռքերով շօշափել նրա ժահը վերքերը . . . ճնշող լծի հաստութիւնը . . . գնալ , տեսնել , ճանաչել և ապէ դատավճիռը տալ , ինչպէս առում է Ռուկեանը :

Դեռ երկար ժամանակ վաչեանը դիտեց իրար խառնված ծովի ու երկինքը , աստղերն ու լուսինը և հանդիսաւ սրտով ու խղճով մի ուրախ եղանակ սուլելով վար իջաւ պաւիլիոնից և գնաց առուն :

Տանեցիք արդէն քնել էին , նա սուս ու փուս ներս մտաւ իր սենեակը , ճրագը վառեց . իսկոյն նրա աչքն ընկաւ իրեն ծանօթ ճրարի վրայ : Այդ մի նամակ էր : Վաչեանի երեսի գոյնը թուաւ . դողալով ծրարը պատռեց և սկսեց նամակը կարդալ , որ զբւած էր Ռուսերէն :

«Թանկագին լէօն ,

«Ահա հինգ օրէ որ ամարանոցում ենք . մեր առունը տեղաւորված է մի շքեղ պարտէզի մէջ . պարտէզին կից է և տերեւախիտ ու միշտ առատիող անտառը : Պարտէզի միջով խայտալով վազում է կարկաչահոս վտակը . նրա երկու կողմերը զարդարում են դալտր վարդի թփերը . . . «Հրաշալի է . լուսաբացին պատռհանս բաց եմ անում , կարօտով այրուղ կուրծքս , քո սիրով բարախով սիրտս գէմ անում . կոծկութիւնը կուրծքս , բուրգութիւնը կուրծքս :

«Նիկների դայլայիկին ու գեղգեղանքին . . . Մի «քիչ յետոյ գնում եմ երեսս լուսնում պաղ ջրով , «անուշահոտ վարդերից փունջ կապում , բերում «գնում քո լուսանկարի առջեւ և սկսում բեղ վրայ «մտածել . երկար նայում եմ աչքերիդ , վերջը «համբուրում լուսանկարդ և վերցնում դօրիո «լիւբօվի «խաւար թագաւորութիւնը» և կար «դում մինչեւ մերոնք կը վեր կենան և ինձ թէյի «կը կանչեն :

«Շուտ արի , սիրելիս , չէ՞ որ խոստացար մի «շաբաթից գալ . ինչո՞ւ չես գալիս , ինչ պատահեց քեզ հետ . նամակ էլ չես զրում : Ցես «մի քիչ էլ ուշանաս կը բարկանամ , ամօթ է : «Առանց բեղ այս զբախտանման տեղը ինձ համար շատ տխուր է . . . »

1890 Մայիս 7 , Մանգլիս Քո վերա

Վաչեանը մի քանի անգամ կարդաց նամակը . ապա սեղանի վրայից վերցրեց մի օրիորդի լուսանկար , երկար ու բարակ նայեց այդ համակրելիք դէմքին , կարծես ուզում էր ամսուր կերպով գրօշմել իր սրտի խորքում : Վաչեանի դէմքը սկսեց գոյն տալ և գոյն առնել . աչքերը մէկ ուրախանալ , մէկ էլ տխրել . . . մի քիչ յետոյ նա պատկերը սեղմեց շրթունքներին . . . նրա սիրտը ալեկոծվում էր , տեսակ տեսակ զգացմունքների հրակոծվում էր , բարձրացել երիտասարդական կրծքիւնք . . .

Դողալով և յուզգած՝ պատկերը դրեց սովորա-

կան տեղը , դուրս քաշեց բիւրօյի արկղներից մէկը , դողալով հանեց նոյն ծրարներով . արդէն բաց նամակների մի բաւական հաստ կապոց , խորը հառաջեց և նոր նամակն էլ դրեց հների մէջ . . . բիւրոն կողպեց և սկսեց սենեակի մի անկիւնից միւսը շրջագայել և ինք իրան խօսել .

— Մի ամսի մէջ ամեն բան տակն ու վրայ եղաւ : Ես փոխվեցի , կեանքիս ընթացքը փոխվեց . . . խեղճ վէրա . . . քո լէօնը արդէն կիսով չափ քեզ չէ պատկանում . . .

«Բայց քեզ սիրում եմ , վէրա ջան . այս ասեղով նա կը կին լուսանկարի կողմը նայեց . շատ եմ սիրում . արդեօք գու էլ ինձ այնչափ սիրում ես որ կարողանաս ամեն բան թողնել և ինձ հետ գալ . . . քո սէրը կարո՞ղ է այնքան զոհողութիւն անել . . . կարո՞ղ ես հայ յեղափոխականին սիրել , ընդունա՞կ ես անպատճած հայ աղջկայ վշտերը ու ցաւերը զգալ . . . նրանց մասին մտածել . . . չեմ կարծում . . . իսկ ես , կը կարողանա՞մ աւանց քեզ ապրել . . . արդեօք հայ յեղափոխութիւնը այնքան կօրութիւն կունենա՞յ , որ ինձ ամբողջովին կլանէ և իրանով զբաղեցնէ . . . Այո , վէրա ջան , փոխվեց ամեն բան . . . Մեր ծրագիրները առ այժմ ջուրն ընկան . . . Ես կը գնամ . . . կանցնի ժամանակ երկար ու ձիգ տարիներ . . . և ո՞վ է իմանում . . . դու ինձ կը մոռանաս , գուցէ և ուրիշին կը սիրես . . .

վաչեանի աչքերում արցունքի շիթեր երեացին . . .

— Բայց . . . ինչ ուզում է թո՛ղլինի . . . պէտք է գնամ . . .

վաչեանը հեռացաւ սեղանի մօտից և սկսեց քնելու պատրաստութիւն տեսնել . . .

Բ

վէրաի նամակից յետոյ անցել էր երկու շաբաթ . թէ հոգեկան ի՞նչ խռովութիւններ քաշեց վաչեանը այդ երկու շաբաթվայ մէջ , աւելորդ է մանրամասն նկարագրել . եթէ գու , ընթերցող , երիտասարդ ես և սիրում ես , ինքդ կարող ես հասկանալ այն մարդի հոգեկան դրութիւնը , որը թէ՝ գաղափարական է և թէ սիրում է : Ինո՞յ սէրը և գաղափարի սէրը ու հաւատարիմ մնալու զգացմունքը կուի դաշտ էին գարձրել խեղճ վաչեանի սիրտը :

վաչեանը երկուսի էր բաժները . մէկ մասը շնչում էր , «Ճի գնա՞ , վէրան քեզ սիրում է , քո ելջանկութիւնը նրանում է» , միւսը մրմթում էր . «գնանք . . . այնտեղ օգնութեան են կանչում . . . թշուառները . . . ի՞նչ ես թուլանում . ինչո՞ւ ես դաւաճանում քո սկզբունքներին . քո տարիներով քարոզած գաղափարներին . . . մօ՛թ է . . . գնա՞նք . . . »

Եւ այսօր ահա վաչեանին մենք գտնում ենք
մի տան մէջ, Տփիսիսի խուլ փողոցներից մէ-
կում, Քորի ափին: Այնտեղ գտնվում են և ու-
րիշ քսանի չափ հայ երիտասարդներ, բոլորն էլ
երկար մազերով, թուխ ու խոհուն դէմքերով,
նիհար: Երկու մոմերի ազոտ լոյալ հազիւ է լու-
սաւորում այդ երիտասարդների դէմքերը. սեն-
եակը լցուած է մխով, կոլոլ սեղանի վրա թափ-
ված են մի քանի թղթի կտորներ և Հայաստանի
հին քարտէզը . . .

Այս երիտասարդները ժողով են կազմել,
նրանք հաւաքվել են միջոցներ խորհելու միա-
ցնել հայ յեղափոխական շաղ ընկած ուժերին,
կամ աւելի ճիշդը նրանց, որոնք ընդունակ կը
լինեն այդպիսի մի գործի: Երանի դրանց ծնող-
ներին, տարիներով դրամ են ծախսել, ուսում
են տուել, մեծացրել են և այս հասակին հաս-
ցրել, իսկ սրանք այսօր ամեն բան ոտքի տակ
տալով ինչ որ յիմար, անշահ բաների ետեւց
են ընկել . . . Տաճկահային են ուզում ազատել . . .
սրանք խելագարներ են ուրիշ ոչինչ . . . ահա ինչ-
պէս կը մտածէր մի հայ հայր՝ եթէ տեսնէր
այսօրվայ ժողովական երիտասարդներին . . .

Ժողովականների մէջ կային և երկու տաճ-
կահայեր. նրանցից մէկը բաւական հասակաւոր
էր. նա խօսում էր շատ մեծամտաբար, աշխա-
տում էր իր կարծիքները հալած իւղի տեղ ըն-
դունել տալ և ահագին ծրագիրներ առաջար-
կում:

Երիտասարդ տաճկահայը մի բարձրահասակ
հուժկու, բաշանման մազերով, խոշոր բայց մեղմ
ու թուխաչքերով մարդ էր. նա շատ կենդանի
գոյներով նկարագրում էր իր հայրենիքի դըժ-
րախտութիւնը բոլոր սրտաշարժ մանրամանու-
թիւններով և յայտնում, որ միայն յեղափոխու-
թիւնը կարող է կեանք տալ տաճկահային:

Երկար ու բարակ խօսակցութիւններից յետոյ
վաչեանը գիմեց իր բոլոր խօսակիցներին.

— Ի՞ն, պարոններ, մեր այս երեք չորս ժամ-
ւայ խօսակցութիւնից յետոյ կարելի է գալ հե-
տեւեալ եղբակացութեանը. — նախ պէտք է քա-
րողող կազմակերպիչ ուժեր ուղարկել Տաճկաս-
տանի այն վայրերը, ուր կարելի է մեծ շար-
ժումներ ասած բերել, ուղղակի հարուածներ
հասցնելու թուրք կառավարութեանը: Յետոյ
պէտք է կռւող ուժեր մտցնել երկրի մէջ, որոնք
ժողովրդին տանջող թէ թուրք և թէ հայ ան-
հատներին պէտք է ոչնչացնեն, վատերին
սարսափ ազդելու, սարկացած ժողովրդի
ո-
զին բարձրացնելու և նրա համակրութիւնը դէ-
պի յեղափոխականը զբաւելու համար: Այդպիսի
զործունէութեամբ միայն մենք կը կարողանանք
հասնել այն օրին, երբ հաստատ կերպով կը
տեսնենք — հայը ընդունակ է մի յեղափոխական
մեծ շարժում ստեղծել թէ ոչ: Ուրիշ կերպ ան-
կարելի է: Այս, նախ մենք մտնենք ժողովրդի
մէջ, զործով կենդանի օրինակներ ցոյց տանք
ժողովրդին, եթէ կարողացնաք ժողովուրդը գը-
տողովրդին,

բաւել, այն ժամանակ յուսալի է որ հայը կը
կռւի ազատութեան համար : Ճշմարիտ է, մեր
փորձերը շատ թանկ կը նստեն ժողովրդին, շատ
զոհեր կը խլեն նրանից, սակայն ուրիշ կերպ էլ
անկարելի է . . . Դարերով զէնք չը զործածող
հայը, արիւնից վախեցող ստրուկը չէ կորող
քարողով և դպրոցով յեղափոխական դառնալ,
նրան արիւնոտ դպրոց է հարկաւոր : . . .

— Ուրեմն դուք նախ հայուն մորթուի՞լ պիտի
սորվեցունէք . . . ասաց հին յեղափոխականը .

— Այս , կարտպետ աղա , եթէ կուզէք արդ-
պէս , ընդմիջեց Ռսկեանը , մի մոռնաք որ հայը
դարերէ ի վեր մորթվում է առանց շշուկի և ա-
ռանց մորթել սովորելու , իսկ հիմա այնպէս
պէտք է մորթվի , որ ինքն էլ մորթել սովորի :

Դրանից յետոյ կրկին խօսակցութիւնը ընդ-
հանրացաւ . վերջապէս որոշվեցին տեղերը , ճամ-
բայ ընկնող քարոզիչները և ծախսի համար գլ-
րամ գտնելու միջոցները :

Արդէն զիշերւայ ժամի մէկն էր երբ ժողովականները կամաց կամաց դուրս եկան խորհըրդաւոր տնից : Ամենից վերջը դուրս եկան վաչեանը և Ռոկեանը :

Ամբողջ Տփղիսը մեռելային քնի մէջ էր թաղ-
ված, մեր երկու բարեկամները անցնում էին
նեղիկ, ծուռ ու մուռ և քարոտ փողոցներով,
նրանց ոտքերի ձայնը խուլ արձագանք էր տալիս
այդ խաւար լուռթեան մէջ . . . երբեմն լսվում էր
ընաթաթախ ոստիկանների խորհրդաւոր սուլոցը,

խանութիւնների պատերի տակ, բայց օդում պառ-
կած, հայ պահապահների խոմբոցը և կամ
խուլ հաւաշանքները. խեղճերի մտքով անգամ
չեր անցնում որ սրանից մի քանի վայրկեան առաջ՝
բասնի չափ անձնէր երիտասարդներ հաւաքված՝
մտածում էին ամէն ճիգ թափել, հնարներ գտնել
որ գոնէ այս չոր քարերի վրայ պառկողների
զաւակները կամ թոռները ստիպված չը լինեն
թողնել տուն ու տեղ, վերցնել աստանդականի
գաւազանը և թափառական հրէաի նման շրջել
աշխարհի ամէն կողմ, լոկ մի կտոր չոր հացի հա-
մար :

Վաչեանը, որ միշտ անտարբեր կերպով էր
անցնում չոր քարի վրայ թափթփած հայ մշակ-
ների կողքով, այս անգամ նա ամէն մէկին հան-
դիպելիս սաստիկ յուզվում էր և քիչ էր մնում
նրանց զարթեցնէր և իր սենեակը տանէր, սա-
կայն ո՞ր մէկին. Նա մինչեւ հիմա լուռ էր գը-
նում, բայց յանկարծ դարձաւ իր կողքովը գը-
նացող Ոսկեանին որը նոյնպէս լուռ էր և ա-
սեց.

— զիտե՞ս, ինչ կայ, Ոսկեան, ես հիմա բու-
լորովին փոխված եմ, մանաւանդ այսօր երբ
լսեցի այն երիտասարդ տաճկահային. Ճշմարիտ
է, շատ էր խօսում, բայց շատ կենդանի գոյ-
ներով և զգաց մունքով էր նկարագրում տաճկա-
հայի դժբախտ վիճակը և այդ դժբախտութեան
պատճառները. հիմա ես էլ չեմ արհամարհում
տաճկահային: Երբ մէկին չես արհամարհում

կարող ես և սիրել, և ես ցանկանում եմ սիրել, միայն սիրելով կարող կը լինեմ բուռն եռանդով գործել . . .

— Դեռ մի քիչ սպասիր, չուտով և կը սիրեմ . . . դեռ ժամանակ կայ : . . .

Այդ բովէին երիտասարդները մտան մի մեծ ու հարուստ փողոց . Վաշեանը մօտեցաւ անկիւնի տանը, գրպանից բանալին հանելով՝ դուռը բացեց և թսկեանի ձեռքը սեղմելով ու բարի գիշեր մաղթելով՝ տան մէջ աներեւոյթացաւ :

Մտաւ մի բաւական շքեղ կահաւորված սենեակ, որի զարդարանքը, կանաչ ապակեայ լուսամփոփ ծածկված, լամպայի լոյսի տակ՝ աւելի գեղեցկանում էր և մարդի վրայ սիրտ ու նեարդեր խաղաղեցնող տպաւորութիւն թողնում :

Վէրախ անբաժան լուսանկարը կրկին սեղանի վրայ էր . Վաշեանը վերցրեց սիրած աղջկայ պատկերը, երկար դիտեց և սկսեց անշունչ կենդանութիւն . . .

— Ի՞ն, հոդիս, վերջացաւ, հայրենիքի սէրը յաղթեց . . . դու ինձ անհամբեր սպասում ես և ո՞վ գիտէ ի՞նչ գեղեցիկ ծրագիրներ ես կաղմում քո սիրունիկ գլխում . . .

«Վաղը կը գամ քեղ մօտ . . . և մի քանի խօսքով կը խորտակեմ քո օդային ամրոցները, դիտեմ քո սիրտ շատ կը ցաւի . . . բայց ի՞նչ արած, ինձ համար էլ ծանր է, և դուցէ դեռ վաղը, հրաժեշտի ողջոյնը տալիս, աւելի ծանր և գժուար լինի . . . ես էլ կը տանջվեմ, ես էլ

կը տատանվեմ . . . իսկ եթէ ես էլ թուլանամ, տուածս խօսքից ե՞տ կանգնիմ, յանկարծ ոլացաւ նրա մտքով, բայց ոչ . այդ անկարելի է :

Վերջապէս վաշեանը զգեստները հանեց, վերցրեց մի հաստ գիրք և սկսեց անկողնում կարդալ . կամաց կամաց նրա ւղեղը յոգնեց և թմրեց, սիրտն ու հոգին խաղաղեցին և մի կէս ժամից նրա աչքերը փակվեցին, գիրքը կամացուկ դուրս սահեց նրա թուլացած ձեռքից . . . Վաշեանը ընկաւ լորփէսմի գիրկը :

Գ.

Երկրորդ օրը Վաշեանը վաղ վերկացաւ և գնաց կայարան՝ դիլիժանսով Մանգլիս, Տփխիսի ամարանոցը, գնալու : Ժամը տասին կառքը կանգնեց գիւղաքաղաքի ծայրին, Վաշեանը դուրս թռաւ, մօտակայ աղբեւրի պազ ջրով երեսը մի լաւ լւաց, թաշկինակով սրբեց և սկսեց գիւղի միջով անցնող խճուղիով գնալ . նա ուշադրութեամբ դիտում էր ամեն մի տուն, վերջապէս կանգ առաւ մի կոկիկ, ուրախ ու զուարթ տան առջեւ, զանգը հնչեցրեց և մի երկու վայրկեանից ներս մտաւ :

Նրան գիմաւորեցին վէրան, մայրը և վէ-

ըայի քոյրը , տասներկու տարեկան գողտրիկ ու կայտառ իւլիան . . . վէրան հենց որ տեսաւ վաշեանին նախ առաջ վազեց . սակայն վերջը շիկնելով իրեն զսպեց : Փոքրիկ իւլիան ժամանակ չը տուեց վաշեանին կարգին բարեւելու մօրը և վէրաին . նա երկու թաթիկներով բռնեց վաշեանի երկու ձեռքերը և քարշ տուեց դէպի սենեակ ասելով :

— Ո՞հ , պարոն լէօն , գիտես որչափ լաւ տուն ունենք , որչափ գեղեցիկ պարտէզ : Ինչ գեղեցիկ առուակ . նրա մէջ թռչկոտում են փոքրիկ ձկները . ես նրանց ուզում եմ բռնել , չեմ կարողանում . . . շատ չարաճճի են . . .

— Թո՞ղ , իւլիա , թո՞ղ , մի բան էլ մենք խօսենք , ինչ ես լվլվացնում , մէջ ընկաւ վէրաի մայրը :

Սակայն իւլիան ուշագրտթիւն չը դարձրեց մօր վրա , և շարունակեց իր լվլվոցը . . .

Այդ ժամանակ միջամտեց վէրան .

— Ախ , իւլիա , ի՞նչ անգաղբումն ես , մենք էլ ենք կարօտել պարոն լէօնին , մի թիչ էլ թո՞ղ մենք խօսենք : Ամբողջովին տիրապետեցիր . . .

— Այս , գիտեմ , շատ ես կարօտել , նրա համար ամբողջ օրը լուսանկարը ձեռքիդ է , չես թողում որ մի քիչ էլ ես նայեմ իմ սիրելի ու սուցչին . հա , պարոն վաշեան , ինչո՞ւ ինձ էլ չը տուիք ձեր լուսանկարը . ես ձեր աշակերտուհին եմ , դուք ինձ շատ էիք սիրում , բայց պատկերը

— Քեզ էլ կը տամ , իւլիա , նորից նկարվելու եմ . . . այն պատկերը միայն վէրաին չեմ տուել այլ ձեր ամբողջ ընտանիքին :

— Տես , վէրա , տես , բացականչեց իւլիան , միայն քեզ չէ տուել , ինչո՞ւ ես տարել քո սենեակում գրել , դիր դաշկիճում , կարծես ես չեմ կարող վարդ քաղել և առջեւը գնել , կամ ոլրօմի մէջ , որ ամենքս էլ տեսնենք . . . սպասիր , գնամ բերեմ :

Վէրան էլ չը կարողացաւ դիմանալ , վաղեց քրոջ ետեւից , ամուր բռնեց նրա ուսերից , բարկացած ցնցեց խեղճ իւլիային . . . իւլիան կարմրեց և նրա սիրուն ու խաժ աշիկները ջրակալեցին և նա լացակումած մրմիջաց .

— Այ , չար . . . սպասիր . . . հայրիկը . . . գայ . . . ասեմ . . . ինչո՞ւ . . . ես . . .

— Սուս , աղջիկս , ամօթ է . քեզ պէս օրիորդն էլ այդքան չարութիւն անէ , ասեց մայրը , ե՞կ , ե՞կ ինձ հետ գնանք Նադէժդակենց տուն . . . ե՞կ , ջանս , այնտեղ կը խաղաս . . .

Իւլիան մի քիչ մնաց և երբ տեսաւ որ մայրը դուրս գնաց , մի բարկացոտ հայեացք դցեց վէրաի վրա , վաշեանին տչքերի տակով ժպտաց և մօրը հետեւեց :

Վէրան առանց ժամանակ կորցնելու , մօտեցաւ վաշեանին , ձեռքը գրեց նրա ուսին և ուղիղ աչքերի մէջ նայելով՝ ասեց .

— Դէ , ասա՛ , չար տղա՛ , ինչո՞ւ այսքան ու շացար , ինչո՞ւ նամակներիս ուշ ես պատասխա-

նում, և ո՞րչափ էլ լուրջ նամակներ ես գրում, բոլորովին առաջւայ նամակներնիդ չեն նմանում. . . իսկ հիմա ինչու այդպէս լուրջ կերպարանք ընդունեցիր . . . մի քիչ առաջ իւլիայի հետ խաղում էիր . . . հօ չը բարկացար, որ ես նրան վշտացրի . . . հը.

— Զէ, օրիորդ վէրա . . .

— Այդ ի՞նչ է, բացականչեց վէրան տեղիցը ցատկելով, և վաչեանի խօսքը կտրելով, օրիորդ, այդ ո՞րտեղից հանեցիր . . . ինչ պաղ ու պաշտօնական ձեւ երկու ամիս իրարից բաժանված սիրահարների մէջ . . . ես կարօտս եմ ուզում առնել, քաղցր խօսքեր լսել և դու էնձ օրիորդ ես անուանում: Խնդրեմ շուտով բացատրիր դրա պատճառը, անշուշտ մի բան կայ, ի դուք չէր որ սիրտս այնքան անհանգիստ էր . . .

— Լաւ, վէրա, նստիր, մի վրդովիր, առանձին մի բան չըկայ, ասեց վաչեանը քնրշաբար վէրաի աչքերի մէջ նայելով:

— Հը, նստեմ, հանգիստ, առանձին բան չը կայ, ուրեմն մի բան կայ, թէեւ ոչ առանձին: Ի՞նչ տարօրինակ խօսքեր . . . չէ, դու էլ ինձ չես սիրում: Երբէք ինձ հետ այդպէս չես խօսել. շուտ ասա՛, ո՞վ քեզ խլեց ինձնից:

Վէրան էլ չը կարողացաւ շարունակել, արտասուքի հեղեղը ժայթքեց նրա անուշիկ աչերից: Նա երկու ձեռքով երեսը ծածկեց և սկսեց հեկեկալ:

Վաչեանը շւարեց, այդ անսպասելի էր. չը գիտեր ինչ անի, մի քանի վայրկեան ապահովութիւն չէ:

Լուս մնաց, վերջապէս ուշքի եկաւ, բռնեց վէրափի ձեռքերը, ուժով նրա երեսից հեռացրեց և սկսեց ջերմ համբոյրներով չորացնել իր հէտ սիրուհու արտասունքը: Մի բանի վայրկեան վէրան ոչինչ չէր անում, վերջապէս յանկարծերկու ձեռքով փաթաթվեց վաչեանի զուվը կցկտուր կերպով արտասանելով.

— Ուրեմն դեռ ինձ սիրում ես. հա՛, առաջ վայ պէս . . . ասա՛, ճիշտն ասա՛, չար լէօն, փորձո՞ւմ էիր, ուզում էիր արտասո՞ւնքս էլ տեսնել. էլ այնպէս բաներ չես ասելու, այնպէս չէ՞ գնա՞նք պարտէզ, զլուխս սկսում է ցաւել. գնա՞նք, այնտեղ շատ զով է և գեղեցիկ, մի փոքր էլ երեսս կը լւանամ, դու էլ կը լւացւես, ես կը սրբեմ քո երեսը. մազերդ ինքս կը սսնարեմ: Սպասիր, սրբիչս վերցնեմ:

Վէրան գնաց իր ննջարանը սրբիչը բերելու. իսկ վաչեանը այդ սիրաբորբոք խօսքերից գրեթէ արբած՝ արձանացաւ . . . վերջապէս նրա միտքը ընկաւ իր ընկերները և խոստումը. նա շըշնչաց.

— Զէ, հենց հիմա, յայտնեմ, ժամանակ չը կորցնեմ, թէ չէ ես էլ կը թուլանամ, մի՞թէ կարելի է երկար դիմանալ սրա արտասունքին, թէ՝ աւելի լաւ է հիմա շասել՝ նամակով գրել. բայց ոչ, այդ կը նշանակէ վախուսա տալ . . . այդ աղնուութիւն չէ:

Վաչեանը այս մոմտուքի մէջ էր, երբ վէրան

վերագարձաւ և նրա խորհրդաւոր դէմքը նկատելով՝ բացականչեց .

— Զէ , այսօր դու շատ տարօրինակ ես . քո սրտում մի բան կայ . ինդրում եմ ի զուր տեղը ոչ դու տանջիր և ոչ էլ ինձ տանջիր . . . մի թագցնի , տեսնում եմ որ տանջվում ես :

— Այս , վէրա ջան , մի բան ունեմ ասելու , միայն մի յուզվիր , և հաւատա որ սուտ չեմ խօսում . . .

— Ասա , ասա , շուտ , վերջացրու :

— Ես գնում եմ Տաճկատան , վէրա :

— Ո՞ր , Տաճկատան , ի՞նչ զործ ունես այն տեղ :

— Երկիրը ուսումնասիր՝ լու . մանաւանդ որ այս ձմեռ աղատ եմ :

— Ի՞նչպէս թէ աղատ ես , զեռ երկու տմիս առաջ չասացի՞ր , պաշտօն ես զտել և լու պաշտօն :

— Այս , զտել էի , բայց սիրտս վրան տաք չէր . չէի կարող չինովսիկ գառնալ , գիտես որ ես կենդանի զործ եմ սիրում :

— Զէ , լէօն , խելքս բան չէ կտրում , եթէ ուրիշ տեղ գնայիր , օրինակ ֆրանսիա , ֆերմանիա , էլի կը հասկանայի , բայց Տաճկատան , մի վայրենի երկիր , չեմ հասկանում , դու ինձ խորում ես , այնտեղ ի՞նչ պէտք է ուսումնասիրես որ քեզ պէտքը դայ :

— Էհ , վէրա , դու ինձ վիրաւորում ես ,

գիտես որ ես խաբել չը գիտեմ . այս , գնում եմ Տաճկատան և մի տարուց յետոյ հազիւ վերադառնամ . . .

— Իսկ , ե՞ս . . . բացականչեց վէրան ,

— Ի՞նչ պիտի անես , կսպասես . . . եթէ ինձ սիրում ես :

— Իսկ եթէ չսպասեմ . . . քեզ հետ գամ :

— Մնկարելի է , իմ ճամբորդութիւնը կարող է վասնագաւոր լինել :

— Զէ , լէօն , դու էլ մի գնա . ես առանց քեզ կը մեռնեմ , դու չես իմանում թէ ո՞չափ եմ քեզ սիրում . . . միթէ քո երջանկութեան համար իմ սէրը բաւական չէ :

— Ի՞նչպէս երեւում է՝ ոչ , հոգիս , ես էլ առաջ այդպէս էի կարծում :

— Ուրիմն հիմա ուրիշին ես սիրում :

— Ոչ օրիորդի և ոչ կնոջ , սակայն սիրում եմ . . . հայրենիքս . . .

¶

Վաշեանի և վէրայի բացատրվելուց մի ամիս յետոյ , Բաթումի արտասահմանեան նաւամատոյցի վրա կանգնած էին , վաշեանը , մի յաղթանդամ և գեղեցկատեսիլ պարոն , տեղացի վաճառական .

ներից, վաչեանի մայրը, վէրան և իր մայրը. Վաչեանը գնում էր Պօլիս, միւսները եկել էին նրան ճամբու դնելու: Ծովը անհանգիստ էր, երկինքը ամպամած և չարագուշակ:

Ահագին նաւը տարութերգում էր գեռ խազաղ նաւահանգստում, ուրեմն ի՞նչ կը լինէր ծովի մէջ, երբ քամին աղատ կերպով կը փչէր չորս կողմից, մի խօսքով պարզ յայտնի էր որ ծովը խաղաղ չէր լինելու և վաչեանը լաւ չէր ճամբորդելու: Սակայն նա հանգիստ սրտով զբուցում էր յաղթանգամ պարզնի հետ. նրանց խօսակցութիւնը կատարվում էր բաւական կամաց ձայնով . . . միւս կողմում էլ խօսում էին կանայքը և վաչեանին նայում:

Վէրան ասում էր վաչեանի մօրը.

— Զարմանալի բան է. շտապելու ի՞նչ կայ. կարծես չէր կարելի մի քանի օր ուշանալ. ճամբորդել այսպիսի մի եղանակի, անհանգստացնել բոլոր բարեկամ ու աղքականներին, ստիպել նըրանց սրտամաշ լինել մինչ առաջին նամակը ըստանալը, չէ, ձեր լէօնը սիրտ չունի, գոնէ ձեր հանգստութեան համար այսօր չը գնար . . .

— Ի՞նչ անեմ, աղջիկս, շատ աղաչեցի. չէ լում:

Այդ միջոցին հեռուից լսուեց, «Ճամբա՛, հեռու . . .»

Բոլորն էլ նայեցին ձայնի կողմը . . . գալիս էր հայաստանցի բեռնակիրը, ահագին բեռը մէջքին, գունտ ու կծիկ դարձած նրա ծանրու-

թեան տակ, հեւալով անքալով . . . վաչեանը այդ տեսաւ, նրա ասբողջ դէմքով անցաւ ջղային մի ցնցում, զայրոյթից կատաղութիւնից գունատվեց և խօսքը ընդհանուրին ուղղելով ասեց.

— Ճեսէք, մեր քաղաքում անսառններին հովանաւորող ընկերութիւն կայ, սակայն մարդիկ այսպէս տանջվում են: Տեսնել այսպիսի անիրաւութիւն, անխղճութիւն դէպի մարդը և լուռ անտարբեր հանդիսատես լինել . . . դակատարեալ լրբութիւն է:

Բեռնակիրը մօտեցաւ տախտակամածի եղերքին, այնտեղ կանգնած չորս ընկերները հազիւ կարողացան վերցնել այդ ահագին բեռը: Բերողը գժուարութեամբ ուղղեց իր մէջքը, իր կեղտուտ, սեւացած ու կոշտ ձեռքերով մի քանի անգամ շփեց խորշումած ու քրտնաթոր ճակատը . . . և հառաչեց—ախ . . .

Շոգենաւը սուլից երկրող անգամ, վաչեանը իր աչքերը հեռացրեց հառաչող բեռնակից և մօտեցաւ կանանց :

— Է՛՞ն, ժամանակը հասաւ. հիմա կը սուլեն և երրորդ անգամ, մի քիչ էլ ձեզ խօսենք.

Վէրան մի քիչ կարմրելով, իր վշտահար աչերը ուղիղ վաչեանի աչքերի մէջ ուղղելով ասեց.

— Եթէ կարելի է, վաչեան, պարոն վաչեան, մի քիչ մի կողմ անցնինք, երկու խօսք ունեմ ասելու: Տիկինները չը գարմացան, նըրանք շատ լաւ էին հասկանում թէ ի՞նչ էր կատարվում իւեղճ աղջկայ սրտում:

Երիտասարդ զոյգը բաւական հեռացաւ, վէրան ուղում էր խօսել, սակայն լիզում չէր դառնում, վերջապէս նա իրան տիրապետեց և փոքր ինչ դողացող ձայնով ասեց .

— Է՞ս, լէօն, զնում ես էլի . . . ինձ թողնում ես . . . ես քեզ այնքան էլ չը հասկացայ, թէ եւ դուն ինձ բացատրեցիր քո ճամբորդութեան նպատակը: ինչ որ լինի, այդ նպատակն է պատճառը, որ դու այսօր ինձնից բաժանվում ես . . . ես քեզ սիրում եմ, և չեմ կարծում ու քիշ որ և է բան կարողանար իմ սէրը բաժանել. բայց դու այդպէս ես, այդքան բարձր ու բարդ բաներ ես չեմ հասկանում . . . զնա՛, բարի ճանապարհ . . . միայն միշտ զրիր, ուր էլ որ լինես, ինչ պայմանների մէջ որ լինես . . . ես քեզ չեմ մոռանայ . . . կսպասեմ . . . երկար . . . մինչեւ վերջը . . .

Նաւը սուլեց վերջին անգամ, վաչեանը թըռուաւ դէպի մայրը . . . խեղճ վէրան ետ մնաց, նրա արցունքը թափփում էր մարգարտաձեւ կաթիներով, նա չուղեց իր արտասուքը ուրիշներն էլ տեսնեն . . .

Վաչեանը շտապով սեղմեց ամենքի ձեռքն էլ և ելաւ նաւի վրա: Խարիսխը բարձրացրին, նաւը շարժեց տեղիցը, վաչեանի մայրը մի կտոր հաց նետեց դէպի նաւ, իբր նշան բարի և աջող ճամբորդութեան:

Կամաց կամաց նաւը հեռացաւ ափից . . . վէրան և մայրերը չէին հեռանում նաւամտոյ-

ցից, նրանք գեռ ծածանում էին իրանց սպիտակ թաշկինակները. բոլորի շրթունքներն էլ շարժփում էին, պառաւները աղօթք էին մրմընջում, իսկ վէրան սիրոյ հրաժեշտը . . . վաչեանը չէր լսում, սակայն զգում էր . . .

Նաւի զնացքը արագացաւ, մի քանի վայրկեան էլ՝ և երկու սիրող սրտերը բաժանւեցին անորոշ ժամունակով, գուցէ և յաւիտեան . . .

Նաւը ճեղքում էր ծովը և թաշունի նման պանում դէպի Բիւզանդիօն, ուր ժամանակիս ամենասուկալի մի բոնապետութիւն յինված՝ իր ոսկէ գահի վրայ սուզմում է միլիոնաւոր ժողովուրդի կոկորդը, լոկ իր ստոր հաճոյքները կատարող ստրուկ հարճերին միշտ ոսկու, արծաթի, գոհարների և մետաքսի մէջ պահելու:

Թուչում էր նաւը և տանում վաչեանին, այն քչերից մէկին, որոնք ջանալու էին այդ հաստատուն զահի տակը փորել և հիմքերից կործանել . . . ու, արեւելեան բոնապետութիւնը նրա բեկորների և փլատակների տակ թաղել: Ծանր, դժուարին աշխատանք: Բիւզանդիօնը գեռ հեռու էր . . . Նաւը որչափ էլ արագ գնար չորս օրից շուտ չէր հասնիլ: Այդ օրերում վաչեանը շարունակ տախտակամածի վրայ շրջագայում էր մի ծայրից միւսը. յիշում էր անցեալը, իր ուսւ ընկերներին, որոնց հետ գեռ մի տարի առաջ ծրագիրներ էի կազմում հսկայական շարժում ստեղծել լայնատարած Որուսա-

տանի մէջ, ազատել ու բազմացեղ միլիոնաւոր ժողովուրդը. և անողոք բռնակալութեան տեղ ստեղծել մի ինքնավար մեծ ժողովուրդ . . . յիշում էր թէ ինչպէս մի տարի միայն ապրելով իր հարազատ երկում, շփվելով զուտ հայրենասէր հայ երիտասարդների հետ, ինքն էլ կամաց համաց հայ հայրենասէր դարձաւ . . . նա յիշում էր և իր երկու տարւայ սէրը . . . իր սիրոյ առարկայի, վէրախ առաջին խանդավառ խօսքերը՝ սիրոյ առաջին շըջանում՝ երբ դեռ համբոյր անգամ չէր բազել նրա կուսակւն շըթունքներից. եւ այսօր այդ բոլորը անցաւ, մնացին միայն յիշատակները . . .

Նա հիմա գնում էր ջաճկաստանի մայրաքաղաքը, իբր հայ յեղափոխական, իբր գաւադիր . . . նա իր նոր գործունէութեան ծրագիրներ էր կազմում, և կարծես խորհրդակցում աստղավառ ու ջինջ երկնքի, ալեկոծ ծովի անտակ անդունդների և բռնաշունչ քամու հետ:

Երբեմն էլ հանում էր ծոցից վէրախ հին նամակները, օրը մի քանի անգամ կորդում շարունակ այն տողերը, որոնց մէջ սիրող աղջիկը թափել էր իր կուսական սրտի բոլոր գործն ու եռանդը . . . վաչեանի աչքերը ջրոտում էին. կոկորդը ցամաքում էր, թուքը բերնում չորանում . . . նա կարծես սկսում էր ափսոսալ, զզջալ իր արած քայլի համար. սակայն ներսում, ինչոր մի աւելի զօրեղ զգացմունք շշնջում էր.

— Ամօթ է, դեռ տատանվում ես. գնա ա-

ռաջ, ի՞նչ են քո սիրուհու արցունքները երբ այնտեղ միլիոնաւոր կոյս աղջիկներ են լաց լինում երկար ու ձիգ տարիներով. նախ գնա, նրանց արցունքը չորացրու, ապա բո սիրուհու վրա մտածիր . . .

Վաչեանը ուշքի էր գալիս, ինքն իրանից ամաչում և կրկին սկսում իր դժոխային ծրագիրների մասին մտածել:

Զորրորդ օրը նաւը մօտեցաւ Պօլսին. գիշերը սարսափելի փոթորիկ էր. լեռնակոյտ ալիքները նաւը թռցնում էին փետուրի պէս. նա իր ամբողջ մասերով ճռճռում էր և կարծես ահա կը կոտրվէր կը Փշրվէր. վախկոտ տղամարդիկ և բոլոր կանայք լեզապատառ եղած լաց էին լինում և փրկութիւն խնդրում Աստուծուց: Միայն նաւապետն էր ամենից խաղաղ և հանգիստ. նա պաղ կերպով կառավարում էր իր նաւը և հեգնում կատաղած տարբին:

Նաւը, մարդկային փոքրիկ ուղեղի օգնութեամբ, կատաղի կերպով դիմադրում էր մոլեգին ծովին . . . վաչեանը չէր հեռանում տախտակամածից. նա դիմում էր այդ կոփւը և մտածում — ահա և մենք, մի քանի հայ երիտասարդներ կուի ենք մտնելու զօրաւոր թուրք բռնտպետի հետ . . . և որչափ անհաւասար ու կատաղի կոփւ . . .

Հինգերորդ օրը՝ դեռ արեւը նոր ծագած նաւը մտաւ Բոսֆոր, վաչեանը զմայլված գիշեում էր հրաշագեղ ծովածոցի ափերում փոփած

ծառազարդ, ընդարձակ ու շքեղ վիլաները. նրա մտքով անցաւ—անշուշտ այս տերրասանման, իրար վրա բարձրացող շքեղ ապարանքներում ապրում են այն գաղանները, որոնք զանազան պաշտօններ վարելով երկրի մէջ՝ ժողովրդի արիւն քրտինքով ձեռք բերած դրամը թալանել և բերել են այս պալատները կանգնեցնելու համար, որոնց ամեն մի քարը գնված է թուրք հպատակի արեան կաթիներով, ամեն մի քար իր մէջ ծըծել է շատ կաթիներ արեան և ազտոտ քատնքի. անշուշտ քարտաշը իր դեղարւեստը այդ կոչտ քարերի վրա թափելիս հանդիպած կը լինի արեան բժերին . . .

Վաշեանը նայում է Պօլսի վրա, հեռւից երեւում են հարիւրաւոր մինարէների երկնաբարձ ու ոսկեզօծ կատարները, որոնց փայլը մրցում է արեւի լոյսի հետ . . . և որոնց վրա Մահմէտի ուշէմանները օրը մի քանի անգամ երգում են իրենց մելամախծոտ ու տխուր ձայնով «Ալահ-էքբէր»: Վաշեանը դիտակով տեսնում էր և վիլանների պարտէզներում թուրք հանմներին, արեւելան գեղեցկուհիներին, որոնք, խլված ու բերված արեւելքի զանազան անկիւններից, ստիպված կատարում էին իրանց քաւթառ և վաւաշտութէրերի ցանկութիւններին, որոնք կամ թէ թուչունների գլուցը լսելով՝ իրանց սեւ բախտին վախճան գտնելու համար ապահոված ատելի փայտայանքներից՝ դուրս էին եկել ոսկեզօծ բանտերից ծառերի ստեղներում իրանց սէրածներին գտնելու կամ թէ թուչունների գլուցը լսելով՝ իրանց սեւ բախտին վայ տալու . . .

Ծովածոցում վիստում էին փոքրիկ շոգենատները. իրանց յաճախ ու զիլ սլոցով մարդու ականջը խլացնում և օտարականի ուշադրութիւնը գրաւում:

Վաշեանը շուարել էր, չէր իմանում որ կողմը գիտէր, իր գիտակը ուր գարձնէր, Բառափորի հրաշալի ափերին, վիլաններին, մակոյիններին թէ վղըզալով վազող փոքրիկ շոգենաւներին, որոնց վրայ լիքը ճամբորդներ էին . . . աւելի ճիշտը հրապուրիչ ճամբորդուհիներ . . . նա ամէն բան մոռացել էր, ամբողջովին ենթարկվել ընական և արւեստական հրաշագեղ փարթամութեան . . .

Յանկարծ խարիսխը դզրդաց. նաւը կանգ առաւ գալախմայի դիմաց. ճամբորդները իրար խառնվեցին, բազմաթիւ խայտարդէտ մակոյիններ շրջապատեցին նաւը. նաւակալարների, ճամբորդների թուրքերէն, յունարէն, հայերէն, ֆըրանսերէն բառերը իրար խառնվեցին և ստեղծելով մի լեզւային քառո՛ օդը թնդացրին: Վաշեանը միայն այդ ժամանակ զգաց որ հասել են: Նաւավարները մարախի նման թափվեցին նաւի վրա և սկսեցին զօրով խել ճամբորդների իրեղէնները: Նաւում տիրեց կատարեալ բարելոննեան խառնակութիւն, վաշեանը շւարած դիտում էր այդ իրարանցումը և զարմանում աճապարող, խելակորոյս, անհամբեր նաւավարների և ճամբորդների վրա: Նա չէր շտապում, նա ուզում էր մի փոքր խաղաղի, այն ժամանակ գնայ. սակայն այդ միջոցին նրան մօտեցաւ մի հայ.

— Եփէնդի , դուք հայ եք , Ռուսիացի , և
ինչպէս կերեւայ , առաջին անգամն է որ Պօլիս
կուգաք . եկէք ես ձեզ լու օթէլ մը տանիմ .
Հայու , կարածայ , բնրային , կամուրջին , բան-
կերուն , խմբագրութեանց մօտիկ տեղ մը . շատ
մաքուր օթէլ մը : Եւ առանց վաշեանի համա-
ձայնութիւնը ստանալու , նրան մօտից վերցրեց
իրեղէնները և տարաւ նստակը դնելու : Վաշ-
եանը ստիպված եղաւ հետեւել նրան : Ճանա-
պարհին հայ կօմիսիօները վաշեանից հինգ ֆը-
րանք վեցրեց մաքսատան պաշտօնեայի համար ,
որ չատ սպասեցն' չը տան և այդպէս էլ եղաւ ,
թուրք անօթի պաշտօնեան հենց որ մէճիտը տե-
սաւ , աչքերը ուրախութիւնից փայլեցին , նա
մուտացաւ իր պաշտօնի պահանջը :

Վերջապէս վաշեանը և իր չիչերոնը մտան
Գալածային նեղիկ , կեղտոտ ու կոշտ քարերով
քարած փողոցները . երկար ու բարձր շինութեան
յետոյ , կանգնեցին մի մեծ ու բարձր շինութեան
առջն . Մտամբոլ հիւրանոցի դիմաց :

Վաշեանը դեռ նոր էր ներս մտել , երբ ծա-
ռան դուրս եկաւ նրա առաջ և առաջարկեց կօ-
շիկները հանել ապա վեր բարձրտնալ : Նա
նախ զարմացաւ ապա հասկանալով բանը ինչումն
է առանց ուշագրութիւն դարձնելու վեր բարձ-
րացաւ :

Մառան սկսեց բռուալ , եկաւ օթէլի տէրը ,
խստութեամբ պահանջնց վաշեանից կօշիկները
հանել . վերջինը կըկին առանց խօսելու շարու-

նակեց վեր բարձրտնալ . Նրա առաջնորդը ֆըս-
փաց օթէլի տիրոջ ականջին—թո՛ղ , Ռուսահայ
է . ատանկ բաներ չի հասկնար , անոնք օթէլի
մէջ կօշիկներնին չեն հաներ . . . Այդ խօսքերը
կարծես կախարդական ազգեցութիւն գործեցին
օթէլի տիրոջ վրա . . . թէ նա և թէ ծառան
լուեցին . արգեօք յարգա՞նքի թէ վախինշան էր . . .

Վաշեանին չորրորդ յարկում մի սենեակ
տուին . հայ առաջնորդը մի մէճիտ էլ իր և բեռ-
նակրի համար տուաւ . անշուշտ խարեց իր Ռու-
սահայ եղբօրը . . .

Վաշեանը երբ միայն մնաց , իսկոյն հանւեց ,
լւացւեց և պառկեց անկողնի մէջ . նա սպասում
էր մէկին , որի հասցէով տումսակ էր ուղարկել
օթէլի ծառայի միջոցաւ :

Մինչեւ սպասած պարոնի գալը նա սկսեց
մտածել .

— Ե՞ն , վերջապէս եկանք հասանք մեր գոր-
ծունէութեան տեղը , Տաճկաստանի մայրաքա-
ղաքը , առաջին տպաւորութիւնը այնքան էլ լաւ
չէ , հայ առաջնորդս ձեռաց մի տաս ֆրանքով
խարեց , օթէլի հայ տէրը ստիպում էր անպատ-
ճառ կօշիկներս հանեմ և ալդպէս վեր բարձրա-
նամ , տարօրինակ պահանջ . . . ճիշտ ալաթուր-
քա . ո՞վ է իմանում , դեռ ի՞նչ տեսակ սովորու-
թիւններ ու կարգեր կան սուլթանների և ամի-
րաների քաղաքում . . . վաղուանից սկսելու ենք
յեղափոխական գաւագիրի կեանքը , տեսնենք ինչ
ընկերներ ենք գտնելու : Արգեօք պէտք է գտնեին

մաքուր յեղափոխական տիպեր . . . Արդեօք չէմ գժուարանալու այդպիսի մի ծանր գործ սկսել ինձ համար իր պայմաններով բոլորովին անծանօթ տեղում, տարբեր դաստիարակութեամբ և սովորութիւններով մարդկանց հետ :

Ճշմարիտ, ինձ կասկածելի է թվում շուտով մի կանոնաւոր կազմակերպութիւն հաստատել և կենդանութեան նշաններ ցոյց տալ . . . տէրօրական գործեր կատարել տալ : Հայից տէրօրիստ, գաղափարական և գիտակցօրէն մարդասպան . տեսնենք, եթէ այդ աջողքից, կը նշանակէ հայը դեռ բոլորովին չէ մեռած և յոյս կայ որ կը վերակենդանանայ :

Է՞՞ն, վէրա ջան, ի՞նչ ես անում հիմա . եթէ իմանայիր թէ այս րոպէիս ինչեր եմ մտածում և վազվանից ինչ փոթորկալի կեանք եմ սկսելու . . .

Յանկարծ գոււը թրխկացրին : Վաչեանը տեղից վեր թուաւ . ասեց—մի փոքր սպասեցէք և սկսեց հագնիվել, մի քանի վայրկեանից նա ձայնից—մտէք :

Ներս մտաւ մի բարձրահասակ, չոր ու ցամաք, խաժ աչքերով, շէկ մօրուքով, ոռւր հայեցքով երեսուն տարեկան երիտասարդ :

— «Ասլան», ներկայացաւ նա, բարով էք եկել, պարոն վաչեան, ասեց և ձեռքը մեկնեց :

Վաչեանը սեղմեց իր հիւրի ձեռքը և նստել հրաւիրեց :

Ասլանը նստեց և մինչ վաչեանը զլանակ կը

շինէր, նա սկսեց շատ զննող հայեցքով դիտել իր նոր բարեկամին : ինչպէս երեւում էր գոհ մնաց, նա ժպտալով հարցրեց .

— Է՞՞ն, լաւ լուրեր բերի՞ք կովկասէն :

— Ոչ լաւ, ոչ վատ, պատասխանեց Վաչեանը լուրերը այս կողմերից պէտք է գուրս դան . ձեր գործերը ինչպէս են գնում :

— Դեռ գործեր չը կան, միայն մարդիկ կան որոնք կուղեն գործել, և ձեր գալուն կապասէնք, որ գործենք : Այս երեկոյ կերթանք իմ ընկերներիս հետ կը տեսակցինք և ըստ այնմ կը վարուինք :

— Շատ լաւ, ուրախ եմ որ այդպէս շուտով պէտք է սկսենք, ես սաստիկ անհամբեր եմ :

— Հիմա քանի որ գործ չը կայ, երթանք քիչ մը զրունունք, քաղաքի հետ քիչ մը ծանօթացէք :

Վաչեանը ուրախութեամբ ընդունեց Ասլանի առաջարկութիւնը և նրանք շուտով դուս եկան օթէլից :

Ե

Հենց առաջին գիշերը վաչեանը ներկայացաւ Ասլանի միւս ընկերներին : Երիտասարդները չորս հոգի էին Ասլանով միասին : Բաւական ուրախութեամբ վաչեանին դիմաւորելուց յետոյ՝ սկսե-

ցին գործի մասին խօսել։ Միւս երկուսը սովորական երիտասարդներ էին և յեղափոխական դաւադիրների բոլոր վին նմանսթիւն չունեին։ Շատ թեթեւ կերպով էին նայում իրանց սկսած գործի վրա և մեծ հաւատ ունեին արտաքին միջամտութեան մասին։ Աչքի էր լնկնում Ասլանը իր երբեմն կրակի նման փայլող նեղիկ աշքերպ, զուտ յեղափոխական խելքով և պազ ու երկաթի նման տրամաբանութեամբ։ Ամենից կրտսերը, մի քան տարեկան երիտասարդ ուսանող, վաղինակը մաքուր և ողեւորւող պատանու տպաւորութիւն էր թողնում, միայն ապագային խոստանալով յեղափոխական լուռ ուժ լինել, եթէ վտանգաւոր ու փոթորկալի կեանքը բոլորովին չը խորտակէր նրան։ Երբ վաչեանը փոքր ինչ ծանօթացաւ իր գործակից ընկերների հետ և որոշ տպաւորութիւն ստացաւ, բացարձակ կերպով սկսեց խօսել.

— Յարդելի պարոններ, արդէն ձեզ յայտնի է թէ ինչու եմ եկել այսաեղ. ես ձեզ բերել եմ իմ եռանդը, իմ ունեցած մտաւոր պաշարը և այն յոյսը, որ եթէ մենք կարողաննք գործել՝ կովկասը մեղ կօգնէ թէ բարոյապէս և թէ նիւթապէս։ Ես երկրի պայմանների հետ ծանօթ չեմ և առանց ձեզ ոչինչ չեմ կարող անել։ Մենք սկսում ենք մի ծանր և պատասխանատու գործ։ մենք ուզում ենք դարերով քնած ժողովրդին զարթեցնել, ցնցել և յեղափոխութեան գիրկը նետել։ Այդ ցնցումը կարող է միանգամայն

փրկել հայ ժողովրդին և թէ կորստաբեր լինել։ Հենց առաջին փորձը ցոյց կը տայ. եթէ յեղափոխական որ և չ չարժումից յետոյ, մեզ հետեւողների թիւը հետզհետէ աւելացաւ անձնուեր անհատներով, այն ժամանակ գործը աջող է. եթէ ոչ, կը նշանակէ դեռ ժամանակ է հարկաւոր . . .

— Ես համոզված եմ որ պիտի յաջողինք. դեռ որոշ գործ չսկսած, այստեղ Պօլսոյ մէջ մի քանի հարիւր յեղափոխականներ կան, բոլորն ալ ամեն զոհողութեան պատրաստ՝ ասեց պատանի վաղինակը աշքերը կրակին տալով։

Մի թոյլ ժպիտ երեւաց Ասլանի բարակ շըրթունքների վրա։ Նա նկատեց.

— Վաղինակ, դու շատ կը ոգեւորուիս. ճիշտ է, հիմա խօսքով շատ յեղափոխականներ կան սակայն վաղը երբ գործ առաջարկուի, երբ հալածանք սկսուի, կեանքերը վտանգուին, այդ հարիւրներէն քանի մը հոգի հաղիւ կը մնայ. սակայն այդ ոչինչ . . . գործը տաքնալէն վերջը մեր թիւը հաղարներու ալ կը համնի։ Ուրեմն մենք դործի սկսինք։ Մեր առաջին գործը՝ պիտի ըլլայ քանի մը վնասակար, ժողովրդին առելի հայերու հոգին առնել և ապա կը սկսինք զօրեղ կազմակերպութիւնը հաստատելու համար՝ գրամ պահանջել։ Ամենէն կարեւորը գրամն է և ես չեմ հաւատար որ մեր գրամաէրերը տանց զօրութիւն մը տեմնալու, առանց վախ ու ակնածութիւն մը զգալու գրամ տան և հաւատան

մեզի : Ասուր համար վաղը պարոն վաչեանին տար քո մարդոցգ ամենէն կտրիծներուն քով, անոնցմէն ահարեեկիչներ որոշելու համար :

Թէ վաչեանը և թէ վաղինակը ուրախութեամբ ընդունեցին այդ առաջարկութիւնը, որը գործի սկիզբն էր դնելու, և որով իսկապէս պաշտօնապէս յայտարարվելու էր հայ յեղափոխական մարմնի գոյութիւնը . . .

Ծնկերները բաժանվեցին բաւական որոխ տրամադրութեան տակ, գրանից յետոյ վաչեանը էլ ազատ ժամանակ չւներ, նա շրունակ թափառում էր կամ վաղինակի եկամ Ասլանի հետ. մեծ մասամբ գիշերները : Նու լինում էր Պօլոյ ամեն մի թաղւամ, Ակիւտոր, Գումզարու, Բանկալթի, Կուզկունճուք, Ստոմչոլ, Ասմաթիս և ամեն մի անկիւն ուր հայ կար, մանաւանդ զաւառացի հայ : Նա լինում էր բաւական բազմամարդ ժողովներում, ապրում նրանց կեանքով, միշտ բարողում և ուսումնասիրում : Հետզիտէ նա աւելի ոգեւորփում էր, որովհետեւ օր օրի վրաւելի համոզվում էր որ գաւառացի տաճկահայր նոյն խոկ Պօլսի նման անբարոյականացնող քաղաքում այնքան էլ չէր փչացել, չէր կորցրել իր թարմութիւնը և իր դրութիւնը բարեփոխելու ցանկութիւնը :

Վաչեանը իրան վատ էր զգում միայն Պօլոյ իրան զարգացած համարողների շրջանում. դրանք մեծ մասամբ թեթեւողիկ, մեծամիտ, ճոռուաբան, կեղծ, շահասէր և վախկոտ մարդիկ էին :

Վաչեանը դրանցից զգվում էր : Մի օր էլ նարոլորսին բարկացած այդ անպէտք պարոնների վրա, գնաց իր ընկերների մոտ և յայտնեց .

— Այդ պարոնները շարլատաններ են, նըրանց հետ ըլ պէտք է գործ ունենալ :

Ասլանը երբ տեսաւ վաչեանի անկեղծ բարկութիւնը, աչքերը փայլեցնելով ասեց .

— Են, պարոն լէսն, ճշմարիտ ըսեմ, ևս կը վախցայ երբ այդ պարոններուն մօտեցաք . Կը կարծէի թէ պիտի խարուիք և գուցէ անոնց ձեռքը խաղալիք գտունաք . ատոնց մէկը իսկական ճիզուիթ է, սակայն շատ ուրախ եմ որ շուտ ճանչցաք այդ կեղծ ու խարդախ մարդիկը : Զանոնք չի հետաքրիքրել ոչ հայրենիքը և ոչ հայ ժողովուրդը . ատոնք մինակ նրենց փառքին և փորին համար կաշխատին . լուսաւորութիւն, աղնուութիւն եւն . խոշոր բառերը բերաննին առած ճառեր կը կարդան գեղեցիկ կանանց վրա տպաւորութիւն գործելու, միամիտ ումբոխը խարելու և տհաս երիտասարդութիւնը գրաւելու համար :

Այդպէս երկար ու բարակ խօսելուց յետոյ՝ մեր տղայքը գնացին ճաշելու, այնտեղից էլ անցան Թէփէբաշի պարտէզը : Վաչեանը գիտում էր զբօնող հասարակութիւնը և վաղինակից տեղեկութիւններ հարցնում . մի քիչ զբօննելուց յետոյ՝ նա ցանկութիւն յայտնեց գնալ տուն . ընկերները նրան տարան մինչև իրա տունը :

Նա մտաւ իր բաւական կոկիկ սենեակը .

այդ սենետկում ամեն բանից շատ վաչեանի ու-
շագրութիւնը զրաւում էր երեխայի մեծութեամբ
սիրոյ հրեշտակը դիբսից շինված, որ ուզզակի
հայելու դիմաց էր կախված առաստաղից: Երբ
լապտերը վառվում էր, այդ ամուռը անդրագարձ-
վում էր հայելու մէջ և ուզիղ հայելու դիմաց
նստողի դէմքին նայում: Այսն առաւօտ և երե-
կոյ, այդ ամուռը վաչեանի միտքն էր գցում
վէրափն, որից նա դեռ ոչ մի նամակ չէր
ստոցել. ճշմարիտ է գործ շատ ունէր, կեանքը
նոր էր և իր նոր տպաւորութիւններով ամբող-
ջովին կուլ էր տուել նրան, ոակայն երբեմն,
մանաւանդ տչքերը ամուռին հանդիպած միջոցին,
մտային քառասի միջից երեւում էր վէրաի տըխ-
րադէմ և կարոտով փայլող աչերը, մի քանի
վայրկեան վաչեանը անձնատուր էր լինում իր
սիրուհու յիշատակին, սակայն գործին վերաբեր-
եալ խոհրդակցութիւնները միանդամից բուռն
կերպով վրա էին գալիս և վէրաի մշուշով պա-
տած պատկերը գուրս վանում նրա մտքից:

Այս ագամ էլ վէրան վաչեանի միտքն ըն-
կաւ . . . Նա մտաբերեց իր առաջին հանդի-
պումը վէրաի հետ:

Մի երկուշաբթի օր-ուզիղ երկու տարի ա-
ռաջ, վաչեանը գնաց վէրաենց տուն յայտնելու
որ ինքը պատրաստ է նրա փոքրիկ քըոլ հետ
պարապել:

Երբ ներս մտաւ, նրա առաջը գուրս ե-
կաւ երկայն ու սեւ մազերը ուսերին շաղ տւած

բարձրահ սսակ, ձուաձեւ դէմքով, նշանեւ
ու բոլորովին սեւ՝ անգունդի պէս խորունկ աչե-
րով երիտասարդ աղջիկ: Դա վէրան էր: Երբ
հրաշտի կոյսը իր կենսատու աչերով մի ակնարկ
գցեց վաչեանի վրա, վերջինը զգաց որ մի ատր-
սուռ անցաւ իր ամբողջ մարմնով, սիրտը սկսեց
թպրտալ, նա սկսեց նայել աղջկայ խորունկ, շատ
խորունկ աչերի մէջ, և պատրաստ էր երկար,
թէկուզ մինչեւ յաւիտեան նայել այդ տեսիլքի
վրա, սակայն աղջկայ երեսը փայլեց մի հմայիչ
ժպիտով. այդ կենսատու ժպիտը մի ակնթար-
թում փոխվեց նուրբ հեգնականի, աղջիկը զգաց
իր զօրութիւնը և առանց մի բան արտասանելու
և վաչեանից խօսքի սպասելու ներս մտաւ ու իր
զանգակի ձայնով արտասանեց.

— Մայրիկ, ինչ որ մի պարոն ուզում է ձեզ
տեսնել:

Հենց առաջին վայրկեանից, վաչեանը սի-
րեց վէրափն. երկար ժամանակ նա իր սէրը
թագցնում էր, երկար ժամանակ օր ու գիշեր
մտածում էր վէրաի վրա և տանջվում, նրան
հագիպելիս միշտ կարմրում և իրան կորցնում. . .
վերջապէս էլ չը դիմացաւ և մի օր յարմար ըո-
պէ գտնելով, դողդողջուն ձայնով ու ամենայն
երկիւզածութեամբ իր ոէրը յայտնեց սիրած ու
պաշտած աղջկան: Այդ հրաշտի վայրկեանը
հիմա վառ կերպով պատկերանում է նրա աչքե-
րի առջեւ—վէրան առանց մի խօսք արտասա-
նելու իր կարապի վիզը թեքեց իրա ուսին և

Վաշեանը իր սիրոյ առաջին համբոյրը դրօշմեց Վէրափ սպիտակ ճակտին . ի՞նչ սքանչելի վայրկեան : Եւ ո՞վ կարող էր այն ժամանակ նախագուշակել որ մի երկու տարուց յետոյ՝ Վաշեանը հարիւրաւոր մզններ հեռու կը լինէր Վէրափ և եթէ մէկը նախագուշակեր, ինքը Վաշեանը արդեօք կը հաւատար . . . բայց այսօր այդ իրականութիւնն է պաշտելի Վէրան միայն երբեմն է ընկնում Վաշեանի միտքը և շատ քիչ անդամ այսպէս յուզումն նրան :

— Երազանման և քաղցր ժամեր . . . աշխարհ, վիշտ, կեանք մոռացնել տուող ժամեր . . . անշցաք գնացիք . . . թուաք, ալացաք գուցէ անշառնալի կերպով—շնչաց վաշեանը և հառաչեց :

Այդ բոպէին յանկարծ սենեակի գուուը բացվեց, ներս մտաւ մի գեղեցիկ, երիտասարդ և Պօլսեցի կնոջ յատուկ հեշտալի դիմագծերով մի տիկին, Վաշեանի տանտիրուհին :

Նա ժպտալով մօտեցաւ սեղանին և ասեց .

— Ո՞իւսիւ Վաշեան, այսօր երիտասարդ մը այս նամակը բերաւ և խնդրեց ձեզ յանձնել. նա նամակը պարզեց, ասելով—հիշ տունը չէք նստիր, միայն երեկոները և առաւտները կը աեմանք ձեր երեսը :

Սակայն Վաշեանը առանց տիկնոջ խօսքերին պատասխանելու՝ պատուեց նամակը ու սկսեց կարգալ : Որչափ նամակը կարդում էր, այնքան նրա դէմքը փոխվում էր . դէմքի շարժումները յոյց էին տալիս նրան հաճոյք և տհաճութիւն

պատճառող կէտերը նամակի մէջ : Վէրափ յիշաւակները ըստ երեւոյթին կրկին գուրս վանվեցին . Վաշեանի դէմքը բոլորովին լրջացաւ և նա մոռանալով տիկնոջ ներկայութիւնը սկսեց նա, մակներ զրել :

Երիտասարդ տիկինը երկար ու բարակ լուռ նստած՝ շարունակ գիտում էր Վաշեանին իր արեւելիան կրակով վայլող աչքերով . վերջապէս համբերութիւնը հատառ և ինքն իրան սկսեց բաւական բարձր ձայնով ծիծաղել :

Երիտասարդը սիժափվեց, աչքերը վեր բարձրացրեց և բաւական խստօրէն հարցրեց .

— Ինչո՞ւ էք ծիծաղում, տիկին :

— Ի՞նչպէս չը խնդրամ; միւսիւ Վաշեան, հիւրեկայ և երկու խօսք ալ չը խօսեցաք ինձի հետ. ձեր հայրենիքի երիտասարդները բոլորն ալ այդպէս ե՞ն .

— Այսինքն բոլորն էլ ինձ պէս անքաղաքարի, այդ էք ուզում ասել, տիկին, պատասխանեց Վաշեանը փոքր ինչ հեղնելով :

— Ոչ, ոչ անքաղաքավարի, այլ շատ լուրջ, պազ, չափէն աւելի լուրջ, սառէն աւելի պազ . . . Աւելի ճիշտը շատ տարօրինակ :

— Թերեւս, պազութեամբ պատասխանեց Վաշեանը և ձեռքը զցեց ծխախոտի տփին, սակայն մանկասմարդ տիկինը ասաց .

— Սպասեցէք, միւսիւ Վաշեան, այսօր ես պարապութիւնէս կը ձանձրանայի և ձեզի համար սիկարաներ պատրաստեցի . նա վերկացաւ մտաւ

Վաշեանի ննջարանը և այնտեղից բերեց մի փոքրիկ արկղ իր ձեռքով պատրաստած սիկարէտներով լի : Վաշեանը չնորհակալութեամբ վերցրեց մի հատ, վառեց և կրկին սկսեց իր նամակագրութիւնը . տիկնոջ գէմքը ամպուտեց, նա զրեթէ վիրաւորփած՝ բարի գիշեր մաղթեց Վաշեանին և դուրս գնաց առանց պատասխանի սպասելու :

— Ե, ասեց ինքն իրան Վաշեանը, պէտք է այս տնից հեռանալ, այս տիկինը շատ է հսկում իմ մասին, նոյն իսկ սիկարէտներ է պատրաստում, թերեւս սիրոյ հըշշտակը իրը թալիսման է կախված հայելու դիմաց . . .

Վաշեանը նամակները վերջացրեց, սկսեց շրջագայել սենեակում և մտածել—է հայկական յեղափոխական մարմինը կազմակերպվում է. դաւադիրների թիւը շատանում է. պէտք է զգուշութեամբ մարդիկ ընտրել : Ահա այս նամակ գրողն էլ ժողովի է հրաւիրում. այդ պարոնը այնքան խելացի և կամքի տէր մարդ չէ երեւում. արդեօք իր ընտրած մարդիկը ինչեր են : Գործը բարդգում է. շուտով և կը տանք կոռի նշանը . կոկովի հալածանքը . արդեօք այս պարոնները կարողանալու են դիմանալ առաջին հալածանքին և վտանգներին, թէ հենց առաջին վայրկեանում դաւաճաններ ու թուլամորթներ են դառնալու . . . Տեսնենք . . . ի՞նչ կը լինի . . . վայմեզ, եթէ հենց առաջին վայրկեանում անյաջողութիւնների հանդիպենք և յեղափոխական

սուլբ գործը մրտունք . . . ի՞նչ կը լինի արդեօք մեր վիճակը . . . ձշմարիտ ծանր գործ . . . մի քանի հոգով կու ենք սկսում յանկարծ, հենց դրանով էլ վերջանայ, չը շարունակվի . վերջնականապէս ընդհատվի : Բայց արտաքին երեւոյթները մեծ յօյս են տալիս . Ամլանը, վազինակը լաւ տիպեր են, նրանց ընտրած մարդիկն էլ լաւ են երեւում. մանաւանդ Ամլանի մարդկանց վրա կարելի է վատահել : Նա հնչակերպով մարդկանց կը միացնի իր հետ. անշուշտ մեծ հաւատ ունի իր ընտրածների վրա . բոլոր ահաբեկիչները նրա խմբերից են . բոլորն էլ գործը հասկացող մարդիկ են երեւում և ամեն բանի ու վտանդի պատրաստ . որչափ սիրում են Ասլանին, բաւական է որ նա հրամայէ կամ առաջարկէ՝ պատրաստ են ծովս ընկնել . . .

Այս, շուտով վործը կսկսի : Հայը պէտք է աշկարա կերպով մարդ սպանէ, ստրուկ հայը դիտակցարար, գաղափարական մարդասպանութիւն պէտք է անէ . . . Տեսնենք որչափ ճիշդէին Ռսկեանի ասածները . . . Եթէ առաջին փորձը աջողվի՝ գործներս լաւ կը գնայ: Պօլում կայ մօտ վախտուն հազար գաւառացի հայեր, դրանք բոլորն էլ հայրենիքից հեռացել են աղքատութեան պատճառաւ և լաւ հասկանում են որ այդ աղքատութեան ամենազլիսաւոր պատճառը բռնութիւնն է, թողնենք միւս պատճառները որոնք ամենքի սիրան էլ այրած կը լինեն. ամենքն այրված են վրիժու ծարաւով : Միթէ

այդ վախսուն հազարից մի վախսուն ըած, կատաղի, յանգուզն հայեր չե՞ն դուրս դայ, անշուշտ կը լինեն. միայն պէտք է պտրել, պէտք է դրանց գտնել. այդ կարսապետները են մեզ հարկաւոր, որ կարողանանք աղդու կերպով յայտարարել հայկական յեղափոխական մարմնի գոյութիւնը . . .

Երեւակայում եմ հայերին արհամարհող, նրան բոլորովին մեռած ու փշացած աղդ համարող գիւղօմատների դրութիւնը . . . իսկ Սուլիմանը . . . Անշուշտ առաջին հեռազբի վրա—հայկական կոմիտէի հրամանով այսինչը սպանվեց—Եւրոպացիք մի մեծ հարցական և զարմացական նշան կը դնեն. հայկական կոմիտէ. հայկական յեղափոխական մարմին, այդպիսի բան չէ կարող լինել, այդ հնարովի է կը լսվի ամեն կողմից. իսկ թրքահայ փաշա եպիսկոպոսները, հայի արիւն քրտինքով թուրքերի ոտքերը լիզելով հորստացող աղա երեսիփանները և փաշաները, մտավախ, կմախկացած ուղեղով հրապարակախօս դաղէթաճիները իսկոյն կսկսեն իրանց կռկռոցը . . . թուրքից աւելի կը կատաղեն, որովհետեւ թուրք կառավարութեան առաջին կասկածը նրանք են դրաւելու, թէեւ Ալիներից աւելի թրքամոլ են :

Մեր թշնամի թուրքերին կը միանան և այդ բոլոր հայերը իրանց կոկորդիլոսի արցոնքներով կսկսեն ոռնալ . . . կսկսվի մատնութիւն, դաւաճանութիւն և մենք ստիպված պէտք

է լինենք մեր ատրճանակի և դաշոյնի ուժը նախ մեր վատ եղբայլների վրա փորձել . . .

Բայց ի՞նչ արած, հառաչելով շնչաց վաչեանը, պէտք է, ուրիշ կերպ անհնար է և այդ բնական է. ուրեմն վայ այն հային որ մեր առջեւ կը կարէ, որ մեզ կը խանգարէ. նրա հետ աւելի խիստ կերպով պէտք է վարվենք: Վաչեանի աչքերը կրակ տուին, կարծես թէ արդէն այդ վատ հայերից մէկը իր առջեւը կանգնած էր և ինը պատրաստում է դաշոյնը խրել նրա սեւացած սրտի մէջ :

Դեռ բաւական ժամանակ այդ տարօրինակ, ճնշող և մաշող մտքերը անց ու դարձ էին անում վաչեանի զլխում: Նա գրեթէ բոլորովին յոզնած ու թուլացած հաղիւ կարողացաւ իր զգեստները հանել և անկողին մտնել, յուսալով որ գոնէ քնի մէջ կը հանդստանար իր բորբոքված ուղեղը. սակայն սեւ ու մռայլ խորհրդածութիւնները սենեակի խաւարում վիստացող մութկէտերին կպչելով կրկին սեւ ուրւականների նըման յարձակվում էին նրա վրա և թոյլ չէին տալիս վաղուց յոզնած աչքերը փակելու . . .

Այդ սեւ ուրւականների վոհմակների ետեւից կարծես սպիտակ մշուշի մէջ երեւում էր վէրափ անուշ և փոքր ինչ տարամած գէմքը և այդ գէմքի վրա շատ թոյլ կերպով խաղում էր նրա առաջին հեգնական ժապարը, որով առաջին անգամ դիմաւորել էր վաչեանին . . .

Q

Արդէն ամսից աւել էր որ վաչեանը զըտ-
նվում էր Պօլսում։ Նա օր ու գիշեր հանգիստ
չունէր. կամ իր տանը նստած նամակներ էր զը-
րում կամ թէ շարունակ ժողովների ներկայ լի-
նում և քարոզում։ Այդ եռուն դաւազրական ու
որոշ հրապուրան ըներով լի կեանքը գերել էր
վաչեանին, նա ոչ թէ ապրում էր այլ այրվում
և ճրագվէ մոմի պէս այրված միջոցին հալվում։
Նա արդէն ճանաչում էր մի քանի հարիւր գա-
ւառացի հայերի որոնց հետ ժամերով նստել էր
մոթ, խսնաւ, ցածրիկ տեղերում և քարոզել,
հասկացրել նրանց յեղափոխութեան վսեմ ու
բարձր նշանակութիւնը։ Պարզ հայ գաւառացի-
ները սկսել էին սիրել, գրեթէ պաշտել իրանց
ուռատհայ եղբօրը, որը հեռուից եկել էր իրանց
հետ միասին աշխատելու, միասին մտածելու ընդ-
հանուր հայրենիքի փրկութեան մասին։ Եւ այդ
աչքից հեռացած, արհամարհիված, հալածված ու
ընկճված տարրը վաչեանի անձնաւորութեան մէջ
գտնելով իր ցաւերի մասին մոածողներից մէկին,
զիւղացի և միամիտ մարդին վայել պարզու-

մակրութիւնը վաչեանին։ Երբ վերջինս մտնում
էր նրանց արեւից զուրկ և միշտ խոնաւ ու կահ
կարասիքից ազատ խրճիթները, բազմաթիւ կա-
րօները, Մկօները, Յակօները ուրախութիւնից ի-
րանց կորցնում էին և ամեն մէկը իր ծառայու-
թիւնն էր առաջարկում։ Երբ վաչեանը չէր մեր-
ժում ճաշակել նրանց կերակուրը, խմել նրանց
սուրճը իրանց հետ մէկտեղ, ծալապատիկ գետ-
նին նստած, գաւառացիների ուրախութեանը
չափ չը կար :

Վաչեանը մխիթարյուն և ոգեւորվում էր,
նա հետշետէ աւելի էր համոզվում որ տաճկա-
հայ հասարակ և միջին դասակարգը բոլորին
չէ ընկել և մի օր կարող է իր հսկայական վիզը
թափ տալ, ցնցիկ, բազուկները շարժել և կաշ-
կանդող շղթաները ջախջախել ու խորտակել։
Մի օր էլ վաչեանը Ասլանի հոտ դտնվում էր
գաւառացիների մի խմբի մէջ, որոնք բոլորն էլ
վանեցիներ էին և արդէն հետեւող մի յայտնի
անձնաւորութեան, որին զրեթէ պաշտում էին։
Խնդիրը բաւական փափուկ էր, զրա համար էլ
Ասլանը բերել էր և վաչեանին։ Հարկաւոր էր
տարիներով յարգված ու խելացի համարված մար-
դու գիմակը վար առնել։ Հենց որ մեր երկու
բարեկամները ներս մտան վանեցիների սկնեակը,
նրանք բոլորն էլ սուս ու փուս ոտքի կանգնե-
ցին և բաւական մասյլ գէմքերով բարին տուին։
Նրանք արդէն ճանաչում էին Ասլանին, որը մի
քանի անդամ զրանց հետ տեսնվել էր և հար-

ւածել դրանց հոչակառոր հայրենակցին, դրա համար էլ վանեցիները շատ չեն համակրում Ասլանին :

Երբ երկու երիտասարդները նստեցին, Ասլանը ասեց :

— Ահա, եղբայրներ, դուք կուզեիք տեսնել վաչեան էֆէնտին և անոր հետ խօսիլ, ինձի չէիք հաւատար, որ մեզի հետ ուռասհայեր ալ կան, հիմա ձեր աշբովը տեսէք, խօսեցէք և լաւ մտիկ ըրէք :

Մի քանի վայրկեանից վաչեանը սկսեց խօսել. հետզհետէ տաքացաւ և ամենայն կատաղութեամբ յարձակվեց այն անհատների վրա որոնք բոլորովին կրակից հեռու ժողովրդեն քարոզում են կրակի հետ խաղալ : Խուրջ վաստերով բացարեց որ ժողովրդի բարեկամը, նրա ցաւերի մասին մատածողը, այդ ցաւերից ժողովրդին ազգատելու տրամադրութիւնը ունեցողը լնքը պէտք է ժողովրդի մէջ լինի՝ ամեն նկատթիւն, ամեն վտանգ յանձն առնելով և նրա հետ միասին աշխատէ այդ ցաւերին դարձան դժնելու :

Ժողովական վանեցիները կամաց կամաց ուղեւորվեցին և յայտնեցին որ պատրաստ են ամեն մի հրաման կատարելու և այսուհետեւ էլ իրանցից հեռու էֆէնտու հետ գործ չը պէտք է ունենան :

Երբ ժողովը վերջացաւ, երկու երիտասարդները դուրս եկան նեխաված ու սծխաթթուով լի սենեակից և ազատ շունչ քաշեցին, նրանք

երկուսն էլ գնացին վաչեանի սենեակը և երբ հասան տուն, Ասլանը դեռ չը նստած րունեց վաչեանի երկու ձեռքը և իր քաղցր ձայնով՝ դրէթէ յուզված ասեց .

— Էհ, զիտէք, պարոն վաչեան, որչափ ուրուին եմ որ դուք եկաք . այս մարդիկ ուռասհայերու մասին շատ մեծ կարծիք ունին և ամեն մէկ խօսքը հալած իւզի տեղ կընդունին : Ուրախ եմ որ ես և դուք մի տեսակ կը մտածենք և երբ ես պաղ պաղ կը յայտնեմ որոշ մաքերը, գուք կուգաք և ձեր սովորական թափով ու ջերմութեամբ կը պաշտպանէք նոյն կարծիքները : Հրաշալի է . մենք իրար կը հասկնանք և իրար կը լրացնենք : Եւ երանի թէ միտ այդպէս լինէր . որովհետեւ եթէ ուռասհայերը աւելի զարգացած են և կուզեն աւելի կտրուկ ճամբով հասնիլ աղատութեան՝ մենք տաճկահայ գործիչներս ալ լաւ ծանօթ ենք երկրին հանգամանքներուն և մեր հայրենակիցներուն դրութեանը, սովորութիւններուն և հոգեկան աշխարհին հետ : Դուք մեր երկիրը դալով նախ պէտք է ուսումնասիրէք, ապա գործի սկսիք, իսկ մենք արդէն ուսումնասիրած ենք և միայն զօրավիգի, ցնցողի պէտք ունինք : Դուք և մենք իրար պէտք է հասկնանք, գնահատենք և ձեռքի տուած գործնք : Այն ժամանակ միայն մենք կընանք մեր ձեռքը առնել հայ ժողովարդը, որուն համար կաշխատինք և առանց որու չենք կընար հասնիլ մեր վեհ նպատակին :

— Շատ ճիշդ ես ասում, Ասլան, պատասխանեց վաչեանը, թէեւ ծշմարիտն ասած զեռ մի երկու ամիս առաջ ես շատ վատ կարծիք ունեի բոլոր տաճկահայերի վրա, սակայն այսօր ուրախութեամբ խոստովանվում եմ, որ դուք իմ երեւակայածից շատ ու շատ բարձր էք եղել ես էլ իրաւունք չունեմ բարձրից նայելու. ձեզ վրա: Մենք ուստահայերս կարող ենք միայն զարկ տալ և զօտացնել ձեր շարժումները, այն էլ գուցէ յեղափոխութեան առաջին շրջանում, որովհետեւ թերեւս ձեզնից աւելի կատաղիները երեւան դան: Եւ ես շատ երջանիկ կը լինեմ այն օրը, երբ տաճկահայը իրան այնքան զօրեղ կզգայ որ էլ չի սպասի Ռուսահայի, այսպէս ասած, առաջնորդութեանը և Աստուած տայ որ այդ օրը շուտ համնի, ոչ նրա համար որ ես չեմ ցանկանում որ Ռուսահայն էլ զոհողութիւն անէ, այլ նրա համար որ մինչեւ բոլոր տաճկահայերը յեղափոխութեան չը դիմեն, դոնէ նրա նշանաւոր մասը, միայն Ռուսահայը ոչինչ չի կարող անել:

— Մի վախենար, պարոն վաչեան, կուգայ և այդ ձեր ցանկացած օրը, թերեւս քիչ մը ուշ . սակայն կուգայ: Միայն առաջին մարդը սպանենք. հայը արիւն թափէ դիտակցարար . . . Ախ, որչափ կուզեմ այդ արիւնը տեսնել, որ շափ ծարաւ ունիմ անոր հոտին. գիտեմ, մարդ սպանելը գէւ բանէ, արիւն թափելը գէւ դորձէ, սակայն ատով միայն մարդս մարդ կըլար, ա-

տով միայն մարդս իրեն իրաւունքները յարգել կուտայ:

«Դարերէ իվեր հայու տունը կը քանդեն, կայըեն, արիւն քրտինքով աշխատածը ձեռքէն կը խլեն, կնիկը, հարսը, քոյրը և աղջկը կ'առեւանգեն, և հայը միայն արցունքով ու պաշտամնքով կուզէ իր իրաւունքները պաշտպանել, իրմէն խլուածը ետ ստանալ, և իր ստորաքարշ դոյութիւնը խնայել տալ: Եթէ մինչեւ հիմա թափած աղի արցունքի տեղ զինքը ճնշողին, զինքը հալածողին արիւնը թափած ըլլար, եթէ հայն ալ ժուրքը, բուրտը սպանէր, անոնց տուները կրակի տար և անոնց կիներն ու աղջիկները փախցունէր՝ հիմա ինքն ալ մարդ կըլար, իրեն պատին և ստացուածքին տէրը կըլար: Սակայն այդպէս չէ եղեր, անէծք մեր պապերուն ու զեկավարներուն . . . ուշ ենք մնացեր, սակայն ալ ժամանակն է՝ սկսինք առանց յապաղելու . . . հետզետէ աւելի գէշնալու վրայ ենք :

— Այս, Ասլան ջան, ճեշդ ես ասում, ուշի ենք մնացել, ասեց վաչեանը, և դորա համար էլ հիմա պէտք է ամեն ջանք թափենք կորցը-րած ժամանակը ետ դարձնելու, քանի տաճկահայերի մէջ կան քեզ նմանները՝ և իմ մինչեւ հիմա տեսած զաւառացիների նմանները, զեռ տաճկահայը կորած չէ. զցենք կրակը, կը բարձրանայ կատաղի փոթորիկը յեղափոխութեան, կառնի այդ կրակի կայծերը կը տարածէ հեռու, շատ հեռու ամեն մի անկիւն ուր հայ

կայ, կը գոյանայ մի ահաղին հրդեհ և իր բոցեղն լեզուներով կայրէ կը լափէ այն բոլորը ինչ որ խարխուլ, փտած և սարուկին յատուկ է:

«Յուսանք և աշխատենք առանց մեզ խնայելու. երթանք առաջ. արդէն իւ! աչքի առաջ պատկերանում է այն գեղեցիկ օրը երբ մեռած, միայն լացող ու հեծող հայը ամ.ն բան թողած իր ձեռքն է առել հրազդն, սուր, կացին, դաշոյն, երկաթի կտորներ և սովորական փայտ ու կուռում է իր պատիւը պաշտպանելու, իր ոտնու կոխ եղած մարդկային իրաւունքների և դարեւոր նախատոնաց վրէժը լուծելու համոր:

«Ճշմարիտ է, սարսափելի գործ ենք ոկոն. կուը շատ անհաւասար է. ինձ պատկերանում է և այն սոսկալի վայրկեանը երբ թուրքը վազրի ոլէս մոլեգնած ոջ ու ձախ կոտորում և մորթում է հային, փշրում ու ջարդում առանց սեռի և հասակի խտրութեան. որովհետեւ իր երեկայ հլու սորուկը յանդգնել է գլուխ բարձրացնել և կռւել իր գորեւոր տիւոջ հետ . . .

«Հեռանկարը սարսափելի է . . . երեւում են զաւակները կորցրած մայրեր, ծնողները կորցրած մանուկներ, սիրելիները կորցրած երետասարդներ և աղջիկներ, հերարձակ և կատաղած, անէծք են գոռում նրանց զլիսին, որո՞ք դրգուեցին վայրի գաղանին և պատճառ եղան չը տեսնուած ու լոված սարսափներ առաջ բերելու: Եւ այդպիսի երազական վայրկեաններում մազերաց վայրին են, մարմինս փշաքաղւում սկսում եմ դո-

զալ, և խիղճո փափսում է—հեռու, հեռու այդ արիւնոտ գործից. ի՞նչ իրաւունք ունես ուրիշների վրա մտածելու, նրանց իրանց սովորական գրութիւնից գուրս կորզելու . . . ԶԵ՞ որ այդպիսով նրանց մահի ես տանում . . .

«Զարագուշակ նախազգացումը ճնշում է ինձ. սկսվում եմ տատանվել. սակայն յանկարծ մի ուրիշ աւելի զօրեղ ձայն, մարդկային, անհատական և ազգային պատախնդրութեան ու վրեժինդրութեան ձայնը որոտում է.

—Ե՞ն, երիտասարդ, ի՞նչ ես թուլանում. գնա՞ առաջ, արիւնից ես վախենում. թափած արիւնը կամ ազատութիւն է ծնում կամ փառաւոր մահ. նա կենսատու հեղուկ է. մի վախենայ. միայն գարերով մեռելական քունը մտհաբեր է. նա ժողովրդին մշտական, առանց յարութեան մահ է պատճառում: Ժուր կրակը. թո՞ղ կռւի հայ ժողովուրդը. թո՞ղ լան հայրերը, թո՞ղ սգան մայրերը. թո՞ղ արտասւեն կոյսերը. միայն թո՞ղ արիւն թափւի. փրկութիւն, ազատութիւն և կեանք միայն հեղած, զետերով թափած արիւնն է տալիս. այդ է եղել բնական օրէնքը աշխարհի սկիզբից մինչեւ հիմա և զեռ շատ ու շատ գարեր այդպէս կը լինի . . .

Ասլանը շարած լսում էր իր բորբոքված ընկերոջը: Երբ Վաշեանը լսեց, նա մի քանի վայրկեան ոչինչ չը կարողացաւ ասել, կարծես թէ իր մտքում գեռ որոճում էր վաշեանի ահարկութօսքերը: Վերջապէս յանկարծակի փաթաթվեց

վաշեանի վզովը , սեղմեց իր կուրծքին և բոլորովին յուղված ձայնով ասեց :

— Նոյն բանը ինծի ալ պատահած է , նոյն բանը ես ու նախատեսած եմ , բայց ոչ այդպէս կենդանի ու վառ կերպով : Այս , սիրելի վաշեան , ինչ փոյթ . մեր խիղճը թո'ղ հանգիստ ըլլայ : Եթէ հայ ժողովուրդը յեղափոխութեան պէտք չունենար , ոչ դուք , ոչ ես և ոչ ուրիշները այդպիսի հոգի , այսպիսի սիրու և այսպիսի ձգտումներ կունենայինք : Միթէ ասկէ քսան տարի առաջ մեր աղջը նոյն տանջանքներուն մէջ չէ՞ր : Ուրեմն կեանքն է մեզ ստեղծաղը . հայ ժողովը կենսական պահանջներն են մեզի ծնողը : Սկսինք առանց վարանելու . շարունակենք անյողողութ կերպով .

— Այս , հայի կեանքն է մեզ ստեղծողը : Ճշմարիտ է՝ քսան տորի առաջ հայը նոյն կեանքն ունէր և նոյն տանջանքները . սակայն քսան տարի առաջ հայը նոյն երիտասարդութիւնը չունէր : Հիմակվայ երիտասարդը սնւել և մեծացել է այն միջոցին երբ ամբողջ Տաճկաստանը և Երսալամի մի մասը հրդեհված էր և ամեն տեղից վառօդի հոտ էր փչում , արեան հոտ էր բուրում : Այն էլ թիւրքի տրեան : Բացի զրանից այժմեան երիտասարդութիւնը իր մասւոր զարգացումով , իր ձգտումներով , իր իտեալներով շատ և շատ բարձր է իր նախորդ սերնդից , իր հայրերից , որոնք միայն զրամի , կամ շատ շատ գողտրիկ ճառերի ետեւից էին ընկել : Այսօրվայ

երիտասարդութիւնը նուրբ , աւելի հանրային զգացմունքներ ունի և աւելի սաստիկ կերպով է զգում իր ժողովրդի անտանելի դրութիւնը ու սարսափելի տանջանքները , աւելի նրբազգաց է զեպի իր ստրկական վիճակը և աւելի պատւախնդիր : Եւ այն , ինչ որ սրանից քսան տարի առաջ ամբողջ հայութեան մէջ զգում , ողբում , հարւածում և երգում էին մի թշչնիթաշնեն , մի գուրեան , մի Արծրունի , մի Ռտֆիր և մի Պատկանեան , այսօր հարիւրաւոր հայ երիտասարդներ են զգում , իսկ տասնաւորներ , գննէ առաջին վայրկեանում , աշխատում իրազործել իրենց նախորդ սերնդի լաւագոյն ներկայացուցիչների քարոզածը և երազածը : Իսկապէս մկնել են դրանք և մենք եկել ենք շարունակելու : Ճշմարիտ է , մերը աւելի դժուար է , աւելի մեծ զոհոզութիւններ է պահանջում . սակայն և աւելի փառաւոր է , աւելի վեհ է . . . նրանք մեզ ցոյց տուին շղթաները , աւերակները և ժողովրդի վերքերը . մենք պէտք է կոտրենք այդ շղթաները , բուժենք վերքերը . վերանորոգենք աւերակները . . . ահա ինչ են կտակել մեզ մեր մօտակայ մեծ նախորդները և մենք ինչ ենք պարտաւոր թողնելու մեղնից վերջը եկողներին :

— Սակայն մենք շատ քիչ ենք , պարսն վաշեան , զէնքով կուռելու համար շատ քիչ ենք . նայեցէք , Տաճկաստանի մայրաքաղաքին մէջ երկու հարիւր հաղար հայէն աւելի կայ , երեք չորրորդ մասը բուն տեղացի է . սակայն տես

քանի բուն Պօլսեցի կայ մեղի հետ . զրեթէ ոչ
մէկը . իրաւ , քանի մը խօսողներ , քանի մը
հատ մռեթ սենեակներու մէջ փափսողներ կան .
սակայն անոնք ալ գեռ սարսափը չսկսած արդէն
կը գողան : իրաւ , հասարակ ամբոխին մէջ կան
վէճ ու բաջ սրտեր , սակայն դանոնք կառավա-
րողներ , խելացի , զարգացած առաջնորդներ ,
յաբմար առթիւ երկու խօսքով մեր դատը պաշտ-
պանողներ չը կան . ասիկա գէշ աղղեցութիւն
կընէ ամբոխի վրայ . . .

— վնաս չունի , ինչպէս մի քանի տասնետկ
տարիներ առաջ խօսողները , գրողները և զգա-
ցողները քիչ էին և այսօր հազարներով են
դրանց նմանները , նոյնպէս և հիմա մենք կուող-
ներս քիչ ենք . սակայն երբ կսկսի կռիւը , երբ
թուրքը կսկսէ հալածել , այն ժամանակ կը շա-
տանան մեղ նմանները , մեզնից աւելի լաւերը .
արիւնու գպրոցը աւելի չուտ , աւելի ստւար
թւով մարդիկ է ստեղծում :

«Թերեւս մենք ընկնենք , նոյն իսկ առաջին
քայլում , սակայն մեր մահը , մեր չարչարանքը
զուր չի անցնիլ . . . կանցնի մի քանի տարի և
եթէ մեզնից մէկը ողջ մնայ՝ կը տեսնի որ շատ
բան է փոխված մեր երկրում . . . կը տեսնի որ
տասի քսանի տեղ հարիւրաւոր կռողներ կան .
ժամանակի ընթացքում , թուրքի սարսափելի
հալածանքի տակ , այդ հարիւրաւորները կը
դառնան հազարներ և վերջապէս մի գեղեցիկ օր
ամբողջ Տաճկաստանը ստիպված յեղափոխական

կը դառնայ , ստիպված դէմք պէտք է վերցնէ . . .
«Ճշմարիտ է մինչեւ այդ օրը շատ ու շատ
զոհներ կը տանք , շատ մայրեր կը լան . բայց ինչ
արած , յեղափոխութեան դիմոդ ժողովրդի , ա-
զատութիւն գնահատող և նրա ծարաւը ունեցող
ազգի վիճակը միշտ այդ է եղել . . .

«Ազատութեան աստուածուհին արիւնուշտ է ,
նա մինչեւ ստրուկի արիւնով չը յազենայ իր
կենատու և ազատաբար լոյսը չի պարզեւի
ասրուկին . . .»

Երկու մտերիմ ընկերները գեռ երկար խօսե-
ցին , յանկարծ վաչեանը ժամացոյցին նայեց ,
ժամանակը ոլացել էր աննկատելի կերպով ոլաքը
ցոյց էր տալիս գիշերվայ ժամի երկուսը :

Նրանք պառկեցին . վաչեանը մի քանի աննշան
հարցեր էլ տուեց Ասլանին . վերջին հարցին պա-
տասխան չստացաւ . Ասլանը քնել էր :

Վաչեանը երկար ու շարակ անկողնի մէջ մի
կողքից միւսն էր դառնում . . . երբ նիրհը դա-
լիս էր և նա մի քիչ ընկնում մոռացութեան մէջ ,
յանկարծ փողոցից լսվում էր կամ գիշերապահի
երկաթածայր դաւազնի հարուածների ձայնը
կամ թէ երազում ծնծ կերած փողոցային անօթի
շան վնդստոցը . . .

Վերջապէս հանգստացան վաչեանի զրգոված
նեարդները և բորբոքված ուղեղը . վաչեանը էլ
չէր շարժվում . . . պատուհանից ներս շողացող
լուսնեակի ճառագայթների փունջը լուսաւորում
էր վաչեանի խաղաղ գէմքը , գուրգուրում և

կարծես հանգիստ քուն սփռում յոդնած երիտա-
սարդի վրա . . .

Ե

Օգոստոսի սկիզբն էր, երեկոյեան ժամի 40
ըստ եւրոպացոց. սարսափելի քամի էր Պօլ-
սում: Խենթացած օդը զօրեղ հոսանքով մտնում
էր Պօլսի կիրճանման նեղիկ փողոցների մէջ,
սեղմվում, ուռչում և մի լայն տեղ գտնէլով՝
կատաղած գաղանի նման մանչալով դուրս էր
թռչում: Բուռու, վկ'զ'զ' . . . լսվում էր ամեն
կողմից չարագուշակ ձայնը և կարծես աշխարհի
մօտալուտ կործանումը յայտարարում: Կենդանի
արարածի հոտն անգամ չը կար. նոյն իսկ պա-
տուհաններից ճրագի լոյս էլ չէր երեւում, ամեն
տան դուռ ու լուսամուտ պինդ պինդ փակված
էին: Յանկարծ որտեղից որ էր լսվեց—Եա՞նկը՞ն
վա՛ր:

«Եա՞նկը՞ն վա՛ր» . Երկու խօսքի ձայնը ալի-
քաւորվելով տարածվեց հսկայական քաղաքի ա-
մեն կողմ և անկիւն . . . այդ բօթաբեր խօսքե-
րին ձայնակցեցին մինչեւ այժմ լռած հազարա-
ւոր շները իրանց սարսուցնող ոռնումներ :

«Եա՞նկը՞ն վա՛ր» (Հրդեհ կայ) այդ երկու
վորքրիկ խօսքերը սարսափ են ազգում ամեն մի
Պօլսեցու վրա, սակայն այս անգամ սարսափը ա-
ւելի ահարկու էր: Այսպիսի փոթորիկ և հրդեհ . . .

Ամեն տուն տակն ու վրա եղաւ, ամեն մարդ
սկսեց պատրաստվել իր կեանքը և զոյքի թան-
կաղին մի մասը գոնէ տղատելու . որովհետեւ
իւրաքանչիւր մարդ համոզված էր որ շուտով
կատաղի քամին կը թացնէ հրդեհած տնից շի-
կացած կայծերը և շաղ կը տայ ամբողջ Պօլսի
մէջ կսկսվի հսկայական հրդեհը՝ որին դիմագրել
անկարող է թոյլ մարդը: «Եա՞նկը՞ն վա՛ր» կրկ-
նվում էր ամեն մի տան մէջ, լայով ու կոծով.
կրկնում էր կինը երեխան և տղամարդը դոյշալով
սպասում որ ահա անհնիղ ու շար քամին կը
բերէ փոքրիկ, գնդասեղի զլսի մեծութեամբ,
շիկացած կայծը և կը բոցավառէ իր տարիներով
սիրած ու փայլայած բնակարանը. դրան հետեւում
էր կայծակի արագութեամբ մի աւելի սոսկալի
պատկեր . անտուն, անտէր, անդեսուտ գտնվել փո-
զոցում այսպիսի մի սարսափելի եղանակի . . .

Այդ միջոցին իւրսէք գալարը մի նեղիկ
փողոցներից մէկում, մի ահագին բարձրու-
թեամբ տան չորրորդ յարկի մի համեստ կահա-
ւորված սենեակում նստած էին վաշեանը, վա-
զինակը և իրանց երկու ընկերները: Ամբողջ
Պօլիսը սարսափահար եղած՝ իրար էր խառնվել,
միայն սրանք էին որ հանգիստ նստած էին:
Վաղինակը թերթում էր ինչ որ թղթի կտոր-

ներ, երկու միւս ընկերները կամաց ձայնով խօսում էին, իսկ վաշեանը բազկալթուի մէջ ընկղմված՝ խաղում էր իր մօրուքի հետ և յաճախական ջը ռւզզում դրան կողմը :

Երիտասարդները ժողով ունեին և Ասլանին էին սպասում։ Նա էլ գժբախտաբար չէր գալս։ Ժողովը շատ կարեւոր խնդրի համար էր։ Հայ դաւաճաններից մէկի համար մահուան որոշում պէտք է տրուէր . . .

Զարմանալի բան. այս ինքնաստեղծ գատաւորները հաւաքվ'լ էին գատապարտելու մի մարդու, որին իրանը չէին ճանաչում և որից ոչ մի անձնական մնաս չէին տնսել։ Տարօրինակ և յանդուգն բայլ, գուցէ խեղճ մեղադրողը հիմա հրդեհից վախեցած պատրաստվում է իր կեանքը աշխատ'լ սպառնացող վտանգից, առանց մտքովն անդամանցկացնելու որ հենց նոյն վայրկ'անին, Պօլսի մի ուրիշ ծայրում, մի բանի անծանօթ հայ երիտասարդներ իրեն մահուան են գատապարտելու և ամեն ճիդ պէտք է թափեն այդ վճիռը իրազործելու։ Վճիռ, որի արտադրած արիւնը այնքան պէտք է յորդանար, որչափ հայ ժողովուրդը ընդունակ կը լինէր դաւաճաններ տալու, որչափ ընդունակ կը լինէր իր դոյութեան համար սկսած կոխուը առաջ մղելու։

Այս, այդ երիտասարդները, այդպիսի մի սարսափ'լի զիշեր, առաջին անգամ հինգ դարւայ հայ կեանքի մէջ՝ մահուան էին դատապարտել իրանց վաս եղբօրը և այդ որոշումը իրա-

գործելով պաշտօնապէս յայտարարելու էին ամբողջ աշխարհին հայ յեղ սփոխական մարմնի գոյութենը, տալու նշանը այն ահեղ ու անհաւասար կռւի, որ սկսվ'լու էր սորուկ հայի և երեն զլուխը ճղմող թուրքի միջեւ . . .

— Է՞ս, Ասլանը շատ ուշացաւ, մի ժամկց աւելի է ինչ սպասում ենք, յանկարծ ասեց վաշեանը, կրկին գէպի գուռը նայելով և գեռ ուղում էր խօսել երբ սանդուխքների վրա ստքերի ձայն լովեց։

Վաշեանը աչքերը ուղղեց դրան վրան. մի վայրկեանից գուռը բացվեց և գրեթէ գըտւարութեամբ շունչ բաշելով ներս մտաւ Ասլանը։

— Բարեւ ձեզ, ասեց նա, սարսափելի քամի կայ, եղբայր, Պօլիս կը քանդուի, հաղիւ կը քալէի, ատ բաւական չէ հրդեհ ալ կայ։

— Հրդեհ, ուրտեղ, գունատվելով միշամտ'ց Մարկոս էֆէնտին։

— Մի վախնար, հանգստացրեց Ասլանը, ձեր թաղէն շատ հեռու է։ Հրթեհը Բանկալթի է։

— Ուրիմն, ինձի վտանգ կըսպառնայ, ես շտապեմ, երթամ, իմ տունս թագումին քովերն է, աման . . .

Այդ ասելով Կիրակոս էֆէնտին տեղիցը վերկացաւ։

— Ի՞նչ կըսես. տղա, քու տունդ ու՞ր, Բանկալթին ու՞ր . . . նստէ։

— Է՞ս, Աստուած սիրէք, թողէք այդ հրդեհը

և սկսնք մեր գործը . արդէն բաւական ուշ է ,
ասեց վաչեանը նեղացած :

— Սկսինք , կրկնեց Առանը և տեղաւորվեց
վաչեանի կողքին՝ աթոռի վրա :

Բոլորն էլ լուցին , վաչեանը ժողովը բացեց
հետեւեալ խօսքերով .

— Բնկերներ , այսօր մանք հաւաքվել ենք
մահուան դատապարտելու մի հոյ մարդու որին
հասարակութան կարծիքը դատապարտել է երր
վատի և դաւաճանի :

« Մարդուն կեանքից զրկելուց սարսափելի
գործ չը կայ աշխարհիս երեսին . սակայն կազ-
մակերպված պետութիւններում և լուսաւորված
երկրներում մահուան պատիքը որբագործվում է
օրէնքով : Օրէնքը հրամայում է սպանել այն
մարդուն , որ իր գոյութեամբ մեծ վնասներ է
հասցնում հաստրակութեան : Օրէնքը այդպիսի
անհատին մահով է պատժում մէկ նրա համար
որ հասարակութիւնը ազատէ վնասակար անդա-
մից , մէկ էլ նրա համար՝ որ հասարակութեանը
վնասակար լինելու տրամադրութիւն ունեցողները
զգան և տեսնեն որ վնասակար մարդը ենթարկ-
վում է խիստ պատժի

« Մենք չունենք ազգային կառավարութիւն ,
չունենք և ազգային պետական օրէնք :

« Մեղ տիրով կառավարութեան օրէնքները չէ
պատժում նրանց , որոնք մեզ համար վնասակար
են ազգային տեսակետից . ընդհակառակը մեզ
համար վնասակարները պատի և մեծարանքի են

արժանանում թուրք կառավարութեան կողմից ,
որովհետեւ կառավարութեան օգուտը այդ է
պահանջում :

« Ուրեմն պարզ է , որ մանք պէտք է պատ-
ժինք այն մարդոց , լինին դրանք թէ հայ և թէ
թուրք , որոնք մեզ վնաս են հասցնում : Մենք
ուզում ենք ապատամբել մեզ ճնշող կառավարու-
թեան դէմ , դրա համար էլ սաեղծում ենք յե-
ղափոխական կազմակերպութիւն :

« Յեղափոխական նորածին կազմակերպութեան
առաջին գործն է ոչնչացնել նրանց ովքեր զօրա-
ւոր կերպով աջակցում են մեզ ճնշող կառավա-
րութեան և մեզ խոչնոտ հանդիսանում ու մեր
նպատակներին հանելը շատ ու շատ ուշացնում :
Մեղ համար վնասակար մարդկանց թւումն են և
հայ զաւածանները , որոնք կառավարութեան
ձեռքում լու գործիք են մեզ խեղդելու համար :
Այդ հայերը զիտնալով մեր լեզուն , մեր սովո-
րութիւնները միշտ շիվում են հայ ժողովրդէն
հետ , մտնում նրա ամեն խաւերի մէջ և հասկա-
նում ամեն բան ինչ որ պէտք է թուրք կառա-
վարութեան և հաղորդում նրան : Այդ տասկ
հայերը մեղ համար աւելի վնասակար են , բան թէ
բուն թուրք պաշտօնեաները : Ուրեմն նախ և ա-
ռաջ մաքրենք , մէջտեղից վերցնենք վատ հայե-
րին , այդպէսով մէնք թէ ազատված կը լինենք
հայ անուանը արատ բերող և վնասակար հայե-
րից և թէ կը սարսափեցնենք , ու ետ կը կա-
սեցնենք նրանց , որոնք կարող են ազագայում

դաւաճան կամ կառավարութեան ձեռքում գործիք լինել :

«Մենք պէտք է լինենք անողոք և խիստ .
սակայն շատ լուրջ, շրջահայեաց և զգոյշ : Մեր
վճիռները պէտք է լինեն հիմնված ամենաչնչին
տարակուսանքից դերծ փաստերի վրա . հակա-
ռակ պարագային մենք կը դառնանք սովորա-
կան ոճրագործ մարդասպաններ . . .

— Զը պիտի մոռնանք նաև, ընդմիջեց Ասլան,
որ մենք պիտի ջանանք գրաւել հայ ժողովորդի
համակրութիւնը, սէրը և համոզել զայն որ իր
վրա հոգացող ու մոածող զօրեղ մարմին մը կայ:
Ատոր հաւար՝ երբ հայ հասարակութիւնը
ֆնասակար ճանչնայ մէկը, մենք պարտաւոր
ենք այդ մարդը ոչչչոցնել :

— Սակայն կրնայ ըլլալ որ հասարակութիւնը
կը սխալի, միջամտեց Վաշինակը :

— Թո՞ղ սխալի, առարկեց Ասլան . մենք
կուզենք հասարակութիւնը, ժողովուրդը զրա-
ւել և զանիկա մեզ հետ միացունել, տանիլ մեր
գոցած ճամբով, այսինքն մեզի հետ յեղափոխու-
թեան գիրկը նետել, ուրեմն մենք ալ ստիպուած
պիտի ըլլանք անոր տաած մարդը մէջ տեղէն
վերցունել, որով մեր իրեն շահուն աշխատելուս
ապացոյց մը տուած կըլլանք :

— Ես լիովին համաձայն եմ Ասլան է-
ֆէնտիին հետ, վրա բերեց Մարկոս էֆէն-
տին :

Գանձապետը լուռ էր և ապուշ ապուշ նայում

էր լսոսով ընկերների վրա և իր թէղրէի հատիկ-
ները շարժում :

Վաշեանը դիմեց նրան :

— Իսկ գուք ի՞նչ էք կտրծում, Կիրակոս է-
ֆէնտի :

— Ատանկ բաներու խելքո չի հասնիր, Վաշ-
եան էֆէնտի, ևս միայն դրամի վ'րաբերեալ խըն-
դիրները լաւ կը հասկնար, որչափ ալ բարդ լւ-
րան այդ խնդիրները : Դժբախտաբար հիմակ ու
հիմա մեր քասային մէջ մկները նիրիտ կը խա-
զան . տնանենք, Աստուած վ'րջը բարին ընէ, պա-
տասխանեց Կիրակոսը :

Ամէնքն էլ ժպտացին :

— Իմ կարծիքով, սկսեց Վաշեանը, երբ հա-
սարակաւթեան ստուար մասը իր անդամներից
մէկին վատ և իրեն թշնամի է համարում, անշուշտ
մեղագրւողի վատութեան ապացոյցները ունի իր
ձեռքում, սակայն մենք պարտաւոր ենք այդ
փստերը մանրամասն քննութեան ենթարկել, ի-
րարից զատել, որոշել և ապա մի որոշ եզրակա-
ցութեան գալ մեղագրւողի վ'րաբերամբ : Որով-
հետեւ յաճախ ամբոխը դատապարտում և ատում
է այնպիսի մէկին, որը կամ պատ չէ պահում,
կամ եկեղեցի չի գնում, կամ, աւելի ճեշտը, չէ
ապրում իր աղքի նիստ ու կացին և սովորու-
թիւնների համեմատ, ուրեմն մենք պէտք է աշ-
խատենք լաւ ճանաչելու մեղագրողների բարո-
յական և մտաւոր արժանիքը, որ և նշանակու-
թիւն տանք մեղագրանքներին : Եթէ մէկի վո-

տութեան ապացոյցները բերում են մաքուր ու խելացի մարդիկ, որոնց կարելի է լիովին վստահել, այն ժամանակ միայն և մենք կարող ենք տալ մեր որոշումը :

«Ուրեմն սկսենք կարգալ մեր ձեռքում եղած փաստերը, մի լաւ ստուգենք և ըստ այնմ տանը մեր որոշումը :

Նա գիմեց վաղինակին .

— ինդրեմ կարգացէք ձեր թղթերը, պարզ վաղինակ :

Վերջինս սկսեց կարգալ .

— Մինաս էֆէնտի Բուրնուղեանը մատնեց կարապետ Բալբչեանին իրը յեղափոխական քարողիչի . կը հաստատեն ինքը Բալբչեան և անոր երկու լնկերները, վանեցի Գետրոս և Մշեցի Գրգո, Դրանց պատւաւոր խօսքով և երդումով :

— Ճետ է, ճշմարիտ է, ասացին ամէնքը, ամսն սարդ գիտէ, պղտիկ երեխան անգամ. ալ քննելու և զննելու պէտք անգամ չը կայ :

Ժողովը միաձայն որոշեց սպանել Մինաս էֆէնդուն, իսկ այդ որոշումը իրագործելու համար ընտրել երկու տհեկիչներ, ամենաքաջ տըղաներից, և սամնհինդ օրւայ մէջ կատարել այդ վճիռը :

Փոթորիկը դադարել էլ, Պօլիսը խոր քնի մէջ էր. էլ չէր լսվում «եանգուն վա՛ր», քաղաքը ընկղմիկ էր խաւարի մէջ. մեր երիտասարդները իրանց առաջին և անողոք վճիռը տալուց յետոյ դուրս եկան այդ խորհրդաւոր անից, որի յար-

կի տակ՝ հայ յեղափոխականները տուին առաջին մահուան վճիռը : Նրանց դուրս գալուց յետոյ, սենեակն էլ խաւարեց և այդ սոսկակի գաղտնիքը թաղեց իր մթութեան մէջ . . .

Վաչեանը և Ասլանը գնում էին միասին, սակայն փողոցի երկու կողմերով, բնութեան փոթորիկը դադարել, ամեն ինչ լուռ էր. սակայն մի տւելի սոսկակի փոթորիկ բարձրացել էր երկու երիտասարդի սրտերում : Նրանք երկուսն էլ սուղված մտքերի մէջ . . . զնում էին լուռ ու մունջ . . .

Յանկարծ վաչեանը ընդհատեց լուռթիւնը .

— է՞ս, Ասլան ջան, մեղնից մահուան հոտ է բուրում. մի քանի վայրկեան առաջ մենք ամենայն պաղութեամբ մահուան դատապարտեցինք մի հայ մարդու. ինձ թւում է որ մենք շատ հեշտ կերպով տուինք այդ վճիռը, կարծես երկար տարիներ դատաւոր եղածների պէս, որոնց սըրտերը ատրիների ընթացքում կոշտանում են և որոնք ամենասարսափելի վճիռն անդամ տալիս են մեծ սառնարտութեամբ : Սրդեօք չշտապեցի՞նք : Սրդեօք այդպէս հեշտաթեամբ վճիռ տալով մեզ համար էլ ուրիշներին սպանելը խաղ ու պար չի դառնալ : Յանկարծ այդ մարդը, որին մենք մահուան դատապարտ ցինք, բոլորովին անմեղ լինի, կամ ոչ այնչափ մեղաւոր որ մահուան արժանի լինէր . . .

«Դու, Ասլան, հաստատ համովված ես որ այդ Մինաս էֆէնդին մահնիչ է :

— Դեռ ատոր վրայ կը խորհիս, վաչեան է .

գէնտի , միթէ սկսոք վարանի՞լ : Թռո՞ղ աստ մըտ-
մատ ըներդ . ա'լ լմնցաւ . եղածը եղած է : Ամ-
բողջ Պօլսոյ հայութիւնը արդ մարդը իւր մատ-
նիչ կը ճանչնայ , կը վկային , կը հաստատեն , ան-
ալ երդումով և պոտուաւոր խօսքով , երեք տղնիւ-
մարդիկներ :

«Ել ի՞նչ կուշէք , ադրբ մահը շատ լու տող ո-
ւորութիւն պիտի ընէ ժողովուրդին վրայ և մեր
զործունէութեան ճամշան պիտի հարթէ : Եթէ
անմել որ լլլար՝ վնաս չունի : Եթէ միւս կ'ան-
քին մէջ իրար հանդիպի՞ք , կը հասկցունի՞ը որ
ողջակէզ մը եղաւ ամբողջ հայութեան և իր հա-
րազատ զուկներուն ազատութեանը սուրբ ս'զա-
նին փրայ : Եթէ լաւ մարդ ըլլայ , մ'զ չի պիտի-
անիծէ . հաւստացէք :

— Ես չեմ վարանում , Ասլան , սակայն խիղճա-
խնձ անհանգոտացնում է . որովհետեւ ես այդ
մարդին չեմ տեսել , չեմ ճանաչում . չեմ ճանա-
չում և մազագրողներին , գուցէ նրանք անձնա-
կան թշնամութիւնից կամ ատելութիւնից զրդված՝
զրպարտել են այդ մարդին . ո՞վ գիտէ , ի՞նչ չէ
կարող պատահել մեր աշխարհում . ահա այս
կառածներն են կրծում իմ սիրտը . . .

«Եթէ սխալված լինենք . . . ստրսավելի է մեր
վիճակը . մենք կը լինենք ոճրտգործներ և մի մեծ
սխալով յայտարարած մեր զոյտթիւնը . . .

— Թռո՞ղ , Աստուած սիրես , Պարոն Վաչեան ,
սխալ կը արամարանես , ատիկա քու գիւրազգոծ
ըլլալդ է , որ քեզի ատանկ ըսնէ կուտայ , վայր-

կենապէս զդայուն դարձած քու սիրտդ է որ
ատոնք կը թեղադրէ քեզ : Դու քանի մը տարի
պիտի ապրիս Պօլսոյ մէջ որ կարենաս մարդ
ճանչնալ և յետոյ որոշել արժանաւոր ու անտր-
ժան մարդիկները : Սակայն գործը չսպասեր ,
գուն հիմակուհիմայ ատանկ ինդիրներու մէջ մ'զ
պիտի հաւատաս և մեղի պիտի վատահիս : Մենք
իրեւ տեղացիներ տեղական մարդերն աւելի լաւ
կը ճանչնանք և եթէ Մինաս էֆէնտիին խնդ-
րոյն մէջ սխալած ըլլանք , յանց ա՞քը մ'ըը պիտի
համարուի :

Արդէն հասել էին վաշեանի տոննը , Ասլանը
սեղմաց վաշեանի ձեռքը և բարի զիշեր մաղ-
թելով իր ճանբան շարունակեց :

Վաշեանը մտաւ իր սենեակը . նստեց ս'զանի
մօտ . զիրք վերցրեց կարգալու , չը կարողացաւ ,
մի քիչ մտածեց , ապա վերցրեց նամակի թուղթը
և սկսաց զրել .

Սիրելի Ռոկեան ,

«Այսօր տուինք առաջին մահուան վճիռը .
տասնհինգ օրւայ մէջ հեռազրական լարը կը
տարածէ աշխարհի չորս կողմը — Հայ յեղափախա-
կան մարմինը մահուան դատապարտեց Մինաս
Պուռնուզեանին և այսօր այսինչ ժամին իր այդ
որոշումը իրագործեց : Այդ տողերը կը կարդա-
գու . և քեզ հետ էլ մի քանիսը : Դուք բոլորդ
էլ կ'ուրախանաք : Սակայն ի՞նչ կը լինի իմ հո-
գեկան վիճակը այդ վայրկեանում՝ չը զիտեմ :

Վոնէ այսօր, որոշումը տալուց յետոյ՝ իմ խիզճս
շատ անհանգիստ է։ Ես մահուան ենթարկելու
ձայն տուի մի մարդու համար՝ որին չեմ ճանա-
չում, նոյն իսկ չեմ տեսել . . . »

Կ. Պօլիս, 1890 Օգոստ.

Բն Ակոն

Ը

Սուլթան Համիտի գահակալութեան զիշերն
էր. օգոստոսի 19ը. ամբողջ Պօլիսը լուսավառ-
ված էր. վաշեանը նստած իր տան ամենաբարձր
պատշամբում, զիտում էր փատիշաների մայ-
րաքաղաքը այդ տան ահազին բարձրութիւնից։
Նրա աչքերի առջեւ ներկայանում էր մի հրա-
շալի տեսարան, հաղարաւոր մինարէները զար-
դարված՝ զոյնզգոյն ապակեա լապտերներով՝
կարծես փոխում էին և երկնքի գոյնը իրանց
զոյնզգոյն արտացոլումներով։ տներ, տմ-
բողջ փողոցներ և պարտէզներ ընկլմվուի էին
գունաւոր ճաճանչների մէջ։ Երեսում էր Բոս-
փորը, որ բաղմաթիւ նաւեր զարդարված նոյն-
պէս զոյնզգոյն լապտերներով։ հրավառ ու հրա-
կայական թռչունների նման թռչում էին հրա-

շալի ծովածոցի այս ու այն կողմը։ Որ կողմէ
նայում էիր, լոյս էր. կապոյտ, կանաչ, կար-
միր, գեղին և այդ բոլոր իրար խառնւած լուսե-
ղէն զանդվածը՝ ջրին ու ցամաքին, քարին ու
փայտին տուել էին ֆանտաստիկական ու հրա-
շալի պատկեր . . .

Մարդ կարող էր կարծել որ տեսնում է
հռչակաւոր «հազար ու մեկ գիշերներ»ի հրաշ-
միքները։

Պօլիսը որախանում էր. բոլոր քաղաքացի-
ները, Սուլթանի թէ՛ հարազատ զաւակ թուր-
քերը և թէ ըայս քրիստոնեանները, հարստա-
աղքատ, ճնշող ու ճնշւող, տէրեր և ստրուկներ
սիրով միացած՝ տօնում էին արեւելեան միա-
պետի գահակալութեան օրը և երկար օրեր մաղ-
թումնրան՝ իր հպատակները աւելի թշուառա-
ցնելու համար . . .

Յնշուշտ միապետը իր բարձրաբերձ ու փար-
թամ պալատից տեսնում էր այդ բոլորը և իր
մտքում ծազրում միլիոննաւոր մարդկունց որոնց
խելօքն ու յիմարը, տգէտն ու զիտունը, աղ-
նիւն ու սրիկան այդ օրը ի մի ձուլված՝ զլուխ
էին խոնարհում փատիշահի սոկէ գահոյքի ա-
ռաջ և իրանց հրճւանքը յայտնում զոյնզգոյն
ու բոցավառ լոյսով։

Վաշեանը զիտում էր. նա իր աչքերը շո-
րունակ գարձնում էր արեւելքից արեւմուտք,
հիւսիսից գէպի հարաւ և ամեն տեղ տեսնում
նոյն խայտարդէտ լոյսը։

Մայրաքաղաքը զուարճանում էր, իսկ նրա
սրտից տրիւն էր կաթում:

Մինաս Էֆէնդու մահուան վճիռը տուած օ-
բից՝ արդէն տասնուհինդ օր էր անցել: Մակայն
որոշումը դեռ չէր իրագործված: Մինաս Էֆէն-
դին դեռ ողջ էր և դուցէ իրը հաւատարիմհպա-
տակ, նա էլ այսօր զւարճանում էր և երկար օ-
րեր մաղթում իր սիրելի վեհապետին:

Կասկածը որ այդ որոշումը չպէտք է ի-
րագործվի, կրծում էր վաչեանի սիրոը. նա էլ
չէր հաւատում որ այդ որոշումը իրագործելու
համար՝ կը դանվէր մի յանդուդն հայ մարդ:
Բայց չէ՞ որ այդ բայլի աջողութիւնից էր կախ-
ված և յեղափոխութեան շարունակումը. նա
գեռ երէկ գիշեր ահարեկիչներին տեսաւ, նրանց
յանդիմանեց և յայտարարեց որ եթէ իրանք
սիրտ չունեն այդ գործը կատարելու՝ ինքը պատ-
րաստ է . . .

— Այս, եթէ այսօր լինէր այդ բանը, եթէ
այսօր այդ սպանումով յայտարարվէր հայ յե-
ղափոխական մարմնի գոյութիւնը, շշնչաց նա,
աշխարհի պատմութեան մէջ կ'արձանագրվէր.
Հինդ հարիւր տարւայ ճնշված ու տաճկական
ստրուկ հայը Սուլթան Համիդի գահակալու-
թեան այսինչ տարեգարձին տուեց իր ապստամ-
բական տրամադրութեան որոշ նշանը և այ-
սուհետեւ աղափառում էլ կը գար մի օր, երբ
նոյն գահակալութեան օրը՝ Պօլիսը փոխանակ
այսպէս ուրախ ու լուսավառ լինելու, մահագու,

շակ խաւարի մէջ կընկզմէր և Սուլթանը փո-
խանակ իր թանկաղին զոհարներով զարգարված
գահի վրա նստած՝ մարդկանց ծաղրելու. կատա-
ղութիւնից իր միուր կը կրծէր . . .

«Այս, միայն սկսվէր. կայծը ընկնէր. այնու-
հետեւ այս երազներն էլ կերականանան :

«Այսօրը սպով ու սարսափով կը կատարվէր.
բայց ո՞ւր է. չէ սկսվում. ստրուկ հայի բա-
զուկը գողում է, չէ կարսզանում դաշոյն և ա-
տըրճանակ բռնել. նա արիւնից վսիում է,
խեղճ վաղինակ՝ ասում էր. հարիւրներով յե-
ղափոխականներ կան. ո՞ւր են. հարիւրների
պէտքը չը կայ, առ այժմ մեղ մէկ է հարկաւոր.
առեքը այդ մէկը . . .

Վաշեանը կրծտացրեց իր ատամները, զը-
լուխը ցնցեց, ապա կարծես թուլանալով՝ բարչ
արից, նա էլ չուղեց նայել հրավառ քաղաքի
շքով ահասրաններին. այնտեղ մարդիկ ուրախա-
նում էին, իսկ նրա հոգին ու սիրտը մխալով
մղմղում և իր ամբողջ ներսը սեւացնում: Նա
այդ դրութեան մէջ բաւական նստեց. բարձրա-
ցաւ մի մազդ զեփիւր, սկսեց խազալ նրա ալի-
քաւոր մաղերի հետ, զուրգուրալ և շոյել նրա
լայն ու այժմ կնծոված ճակատը, համբուրել
նիհար ու զունատված այտերը և կարծես մըր-
մնջալ նրա ականջին.

— Ե՛յ, երիտասարդ, ի՞նչ ես այդպէս սպատոր-
վել, կարծես թէ մահու հրեշտակը առջեւդ
կանդնած լինի. միթէ աշխարհի ցաւն ու վիշու

Մայրաքաղաքը զուարձանում էր, իսկ նրա սրտից արիւն էր կաթում:

Մինաս Էֆէնդու մահուան վճիռը տուած օ-
բից՝ արդէն տասնուհինդ օր էր անցել: Մակայն
որոշումը գեռ չէր իրագործված: Մինաս Էֆէն-
դին գեռ ողջ էր և դուցէ իրը հաւատարիմհպա-
տակ, նա էլ այսօր զւարձանում էր և երկար օ-
րեր մաղթում իր սիրելի վեհապետին:

Կասկածը որ այդ որոշումը չպէտք է ի-
րագործվի, կրծում էր վաչեանի սիրոը. նա էլ
չէր հաւատում որ այդ որոշումը իրագործելու
համար՝ կը դանվէր մի յանդուդն հայ մարդ:
Բայց չէ՞ որ այդ քայլի աջողութիւնից էր կախ-
ված և յեղափոխութեան շարունակումը. նա
գեռ երէկ գիշեր ահաբեկիչներին տեսաւ, նրանց
յանդիմանեց և յայտարարեց որ եթէ իրանք
սիրտ չունեն այդ գործը կատարելու՝ ինքը պատ-
րաստ է . . .

— Այս, եթէ այսօր լինէր այդ բանը, եթէ
այսօր այդ սպանումով յայտարարվէր հայ յե-
ղափոխական մարմնի գոյութիւնը, շշնչաց նա,
աշխարհի պատմութեան մէջ կ'արձանադրվէր.
Հինդ հարիւր տարւայ ճնշված ու տաճկական
ստրուկ հայը Սուլթան Համիդի գահակալու-
թեան այսինչ տարեղաբերձին տուեց իր ապստամ-
բական տրամադրութեան որոշ նշանը և այ-
սուհետեւ աղադայում էլ կը գար մի օր, երբ
նոյն գահակալութեան օրը՝ Պոլիսը փոխանակ
այսպէս ուրախ ու լուսավառ լինելու, մահագու,

շակ խաւարի մէջ կընկլմվէր և Սուլթանը փո-
խանակ իր թանկադին գոհարներով զարդարված
գահի վրա նստած՝ մարդկանց ծաղրելու. կատա-
ղութիւնից իր միսը կը կրծէր . . .

«Այս, միայն սկսվէր. կայծը ընկնէր. այսու-
հետեւ այս երաղներն էլ կերականանան:

«Այսօրը սպով ու սարսափով կը կատարվէր.
բայց ո՞ւր է. չէ սկսվում. ստրուկ հայի բա-
զուկը դողում է, չէ կարողանում դաշոյն և ա-
տըրձանակ բռնել. նա արիւնից վսիում է,
խեղճ վաղինակ՝ ասում էր. հարիւրներով յե-
ղափոխականներ կան. ո՞ւր են. հարիւրների
պէտքը չը կայ, առ այժմ մեղ մէկ է հարկաւոր.
տուէք այդ մէկը . . .

Վաշեանը կրծտացրեց իր ատամները, զը-
լուխը ցնցեց, ապա կարծես թուլանալով՝ բարչ
արից, նա էլ չուզեց նայել հրավառ քաղաքի
շք՛ղ ակատրաններին. այնտեղ մարդիկ ուրախա-
նում էին, իսկ նրա հոգին ու սիրաը մխալով
մզմզում և իր ամբողջ ներսը սեւացնում: Նա
այդ դրութեան մէջ բաւական նստեց. բարձրա-
ցաւ մի մազ զեփիւռ, սկսեց խաղալ նրա ալի-
քաւոր մաղերի հետ, զուրգուրալ և շոյել նրա
լայն ու այժմ կնճռված ճակատը, համբուրել
նիհար ու զունատված այտերը և կարծես մըր-
մնչող նրա ականջին.

— Է՛յ, երիտասարդ, ինչ ես այդպէս սպաւոր-
վել, կարծես թէ մահու հրեշտակը առջեւդ
կանդնած լինի. միթէ աշխարհի ցաւն ու վիշու

ք'զ են տուել : Եայիր շուրջդ , տես ինչպէս ա-
մենքը զւարճանում են , առանց հասակի և սեռի
խարութեան : Իսկ դու սեւ բուի նման նստել
ես այս բարձրութեան վրա և մահի մասին մտա-
ծում , բարկանում և ինքդ քեզ ուտում , ինչէ
դեռ չը կարողացար մի հայ գաւաճանի սպանել :

Շշնչա՛ղեփիւռ , ինչքան կուղես . վաչեանի
առջեւ կանգնած է Մինաս էֆէնտին , նա լաւ ,
շատ պարզ տեսնում է այդ գաւաճանի երեսը ,
նրա մահն է ուզում . որովհետն այդ մահով է
սկսուելու այն որբաղան կոիւը , որը տեղի է ու-
նենալու հայի և թուրքի մէջ : Այս , կոկովի
կոիւը , կը մեռնեն , կո զանւեն շատերը , կանց-
նի ժամանակ , գուցէ և բաւական երկար , կը ո-
կուեն նոր , թարմ և կանաչ կեանքերի համար է որ
վաչեանը ուզում է Մինաս էֆէնդու մահը , այդ
աղաղայ կեանքերի համար է որ մղկում ու-
ճմլում է վաչեանի երիտասարդ սիրտը . կծկը-
վում այն աստիճան , որ կարծես դադարում է
բարախել :

Յանկարծ պատշգամ եկաւ վաղինակը և այդ
դրութեան մէջ վաչեանին տեսնելով՝ մի վայրկեանի
չափ ապշած մնաց , վերջապէս բոլորովին մօտե-
ցաւ բարեկամին և կամացուկ ձայնով ասեց .

—Պարոն վաչեան , ի՞նչ կընէք , քնա՞ծ էք :

Վաչեանը գլուխը վեր բարձրացնելով՝ մի քիչ
դժուարութեամբ պատասխանեց .

—Ոչ , քնած չեմ , այլ մտածում եմ :

—Ի՞նչ մտածելու ժամանակ է . լսեցէք , ձեզ
ուրախ լուր եմ բերած :

—Ի՞նչ լուր , տեղից վեր ցատկելով ասեց
վաչեանը :

—Երեք օրուան մէջ Մինաս էֆէնտին ան-
պատճառ պիտի լնցունենք : Այս անդամ հաս-
տառ է . եթէ չընեն , ես պիտի լնեմ , պատոյ
խօսք կուտամ . . .

—Իսկ ես կարծեցի թէ արդէն վերջացել է .
ոհ , վաղինակ , որչափ լաւ կը լինէր եթէ այսօր
իրագործվէր այդ վճիռը . . .

—Լաւ , երթանք քիչ մը զրօնունք , Պօլիսը
հիմա հրաշալի է , ասանկ բաներ Ռուսիա կամ
Կովկաս տեսած չէք անշուշտ : Հիմա Պօլիսը տես-
նող օտարուկան մը կընայ կարծել որ Թիւրքիայէն
երջանիկ երկիր չկայ աշխարհիս երեսը և մեր
վատիշտահէն ալ գորովագութ թագաւոր . . .

«Եհ , ելէք երթանք : Այնէն լաւ ժամանակն
է զրօնելու :

Երկուսն էլ մտան սենեակ , վաչեանը կամաց
կամաց , կարծես տհաճութեամբ հագնվեց և
դուրս եկաւ վաղինակի հետ :

Երկու երիտասարդները զարդարված անցորդ-
ներին գիտելով հրավառ ու կենդանի փողոցների
միջով անցան դէպի Տօլմաբախչէ : Պալտափի պար-
տէզում ասեղ զցելու տեղ չը կար . արեւելեան
ու արեւմտեան ճաշակները և շուայլութիւնը իրար
խառնված ճնշում էին վաչեանին , որը սովոր չէր
այդ տեսակ ճոխութեան . պարտէզում հնչում էր
6

թուրքաց հեծելազօրքի նուագախումբը : Մուզիկայի մեղմ ու երազեցնող հնչիւնները վաչեանի խռովված սիրտը մի փոքր հանգստացրին . նա սկսեց ուշադրութեամբ դիտել իր շուրջը . յանկարծ նրա աչքը ընկաւ գահազուրկ ու բանտարկեալ Մուրատի պալատի վրա . այդ պալատն էլ ընկլյմված էր լոյսի մէջ , սակայն Մուրատի սիրտ ու հոգին խաւարով էին պատաժ այդ սուկեղէն վանդակի մէջ : Մուրատը սգում էր իր սեւ բախտը և անիծում իր եղբօրը , որը իրանից մի քիչ հեռու , մի աւելի շքեղ պալատում դիտում էր նենգութեամբ կորզած գեղեցիկ աթուանիստը և հրճվում . . .

Պէշիկթաշում հրճվում էր Համիտը , իսկ այստեղ , գահընկեց և խենդ հրատարակված Մուրատը փետում էր իր մազերը և աւելի սոսկում , որ գեռ երկար տարիներ պիտի տանջվի այդ շքեղ վանդակում , գուցէ այդ րոպէին նրա մէջ աւելի զրդովում էր աղատութեան ծարաւը . և գուցէ նա , իր արքայական բանում մւմնջում էր .

— Թողէք աղատ լինեմ , թոշունի պէս , լեռան քամու պէս աղատ , առէք ձեր ոսկին ու գոհարները . առ , Համիդ , այս անիծեալ ոսկեզօծ պալատը , տուրքին հովական աղքատիկ խրճիթը , ամեն ինչ քեզ թող լինի . . . թող որ աղատ լինեմ :

Ահա այս էր անցնում և վաչեանի մտքով . վերջապէս նա գլուխը դէպի վաղինակը թեքե-

լով՝ ասեց իր մտքի շարունակութիւնը .

— Եթէ այս մարդը , Սուլթան Համիդը , այդքան անխիղճ ու քարասսիրտ է դէպի իր հարազատ եղբայրը , ապա որչափ խիստ պէտք է վարվի իրեն դէմ ապստամբող բայայի դէմ : Մարսափելի բան կը լինի , արիւն դետերով կը ոզողէ մեր հայրենիքը . . .

— Այս , պատասխանեց վաղինակը , կ'ըսեն են որ այդ մարդը շատ քարասսիրտ ու անխիղճ է :

Բաւական ժամանակ այս կողմ այն կողմ թափառելուց յետոյ վաչեանը տուն վերադարձաւ : Նա ճրագը վառեց թէ չէ , իսկոյն սեղանի վրա տեսաւ վէրափ նամակը . վաղուց էր որ վերջինից նամակ չէր ստացել : Առանց ժամանակ կորցելու նա պատուց ծրարը և սկսեց կարդալ հետեւեալը .

Սիրելի լէօն ,

« Ամից աւել է որ քեզնից նամակ չեմ ստացել . այս ի՞նչ է . միթէ ինձ բոլորովին մոռացա՞ր : Միթէ այդքան կարծ ժամանակի համա՞ր ինձ սիրեցիր : Ինչու չես գրում , ի՞նչ ես անում : Չէ՞ որ քո գործերը հիմա ինձ էլ են հետաքրքրում : Ես ուզում եմ ամեն բան իմանալ , միթէ ինձ այնքան անհասկացող ես համարում , որ չե՞ս ուզում քո գործերի մասին ինձ հետ խօսել : Ասա , լէօ , ի՞նչպէս անեմ , որ գու էլ ինձի սիրես այնպէս , ինչպէս ես եմ քեզ սիրում : Ոհ , ես քեզ շատ եմ սիրում , գուցէ և չափից աւելի :

Օր ու գիշեր աչքիս առջեւն ես . Երբեմն մտքով անցնում է գալ քեզ մօտ , առանց քեզ իմացնելու , յանկարծակի : Սակայն ո՞վ ինձ թոյլ կը տայ : Միթէ կարո՞ղ եմ այդ մտադրութիւնս յայտնել նոյն իսկ մօրս : Բայց որչափ կուղէի գալ Պօլիս և գաղտնի կերպով քեզ հետեւէի , հասկանափի , ի՞նչ ես անում , ու՞մ հետ ես տեսնվում . . .

Այս ի՞նչու ես էլ այր մարդ չեմ , ինչու մենք կանայքս էլ չենք կարող ձեզ նման ազատ և մեր ուղածի պէս ապրել : Ի՞նչու ձեզ համար այդ աստիճան ուղաստութիւն իսկ մեզ համար այսչափ սահմանափակում : Մենք քանի աղջիկ ենք , ապրում ենք մեր ծնողների տրամադրութեան և քմահաճոյքների համաձայն , եթէ ծնողներ չւնենք՝ աղջականների , նոյն իսկ ամենահեռու աղջականների , իսկ դուք գեռ մանուկ հասակից սկսում էք զբեթէ անկախ կեանք վարել : Միթէ այդ աստուածային օրէ՞նք է , թէ իրենք մարդիկ են այսպէս կաշկանդել կանանց . . .

Վերջին օրերում , երբ քեզ տածած կարօտաս սաստկութեան գագաթնակէտին է հասել , և ես աղատութիւն չունեմ սրտիս ու հոգուս այդ ըլնական պահանջին բաւականութիւն տալ , այդ հարցերը անգագար զարժնում են իմ զլխում :

Եթէ դու այստեղ լինէիր , չոր լէօն , անշուշտ հիմա վաղուց պատասխանած կը լինէիր . սակայն ի՞նչ եմ ասում , կարծեմ սխալվում եմ .

Եթէ դու ինձ մօտ լինէիր , ես քեզ չեի կարօտելու և այս հարցերն էլ իմ մտքում չէին ծագել :

Հիմա ծագել են այդ ինձ հետաքրքրող հարցերը , տանջում են ինձ և դու չը կաս : Ուրիշին չեմ ուզում գիմել , քեզնից եմ ուզում իմանալ . ուրեմն զրիր , սիրելիս , շուտ , առանց ուշացնելու , անհամբեր սպասում եմ :

Երեկ ինձ մօտ էր իմ ընկերուհի Արուսեակը , անշուշտ յիշում ես , դու շատ էիր հաւանում նրան և ինձ մօտ միշտ գովաւմ . ես քեզ վրա բարկանում էի . . . նախանձում էի և չեի ուզում ասել որ նա էլ քեզ էր շատ հաւանում : Նա հարցըց քո մասին , երբ ես առանց թաղցնելու յայտնեցի որ մի ամսից աւելի է ինչ քեզնից նամակ չունեմ . . . նո ինձ ասաց .

«Վէրա , զլխիդ ճարը տնս , Պօլսում հրաշտվի հելենուհիներ և հայուհիներ կան . ասում են որ նրանք շատ շուտով են հրապարում այր մարդկանց . հիմա գուցէ վաշեանը արդէն ընկել է նրանցից մէկի ցանցը , մանաւանդ որ Պօլիսը շատ բանաստեղծական տեղ է : Այդ տեսակ վայշերում մարդիկ շուտ են սիրահարվում : Բնութիւնն է այդպէս տրամադրում . . .

Ես թէեւ բարկացոյ , բայց ոչինչ չասի : Կածկածի որդը սիսեց կրծել սիրոս , բայց վ'րջը , Արուսեակի գնալուց յետոյ՝ գնացի իմ սենեակը . սիրոս սկսեց ճլվել , արցունքի կաթիլները իւրանք իրանց թափվոցին իմ աչքերից , ես սկսցի դառն կերպով լու :

Տես, լէօն, ինձ չը մոռանաս . չէ՞ որ ես էլ
գեղեցիկ եմ . դու ասում էիր որ շատ գեղեցիկ
եմ, այդ ես էլ էի զգում : Չես մոռանայ քո
վէրախն, այնպէս չէ :

Հա՛, չը մոռանաս տուածս հարցերին պատաս-
խանել :

10 Օգոստ. 1890

Բո Վիրա

Տփխիս

Վաչեանը նամակը կարդալուց յետոյ, ձեռքը
դրեց ճակատին և սկսեց մտածել : Վէրաի նամա-
կը նրան բաւական մեծ զոհունակութիւն պատ-
ճառեց . միշտ ուրախ և լուրջ ինդիբների մասին
երբէք զլուխ չը ցաւեցնող վէրան իրաւունքի .
ազատութեան ինդիբ էր բարձրացրել . նա գան-
գատվում էր կնոջը վիճակված կաշկանդող գրու-
թիւնից : Սէրը, սիրած էակից հեռու լինելը,
վէրաին ստիպել էին մտածել կնոջ ճնշուած և
սեփական կամքից զուրկ լինելու վրա : Միսիթա-
րական երեւոյթ . եթէ իւ սիրած աղջիկը զգա-
ցել է որ ինքը ճնշուած է, սեփական կամք
չունի, չէ կարող իր տրամադրութեան համա-
ձայն վարվել . աւրեմն շուտով կսկսէր և կուել
այդ ճնշողների հետ, ովքեր էլ որ լինէին դրանք :
Եթէ վէրաի սէրը զօրեղ լինէր, վէրան կը
կուէր մինչեւ վերջին շունչը, այնքան որ կարո-
ղանար յաղթել և իր սրտի իրաւունքները պաշտ-
պանէր : Ահա՝ ինչ էր մտածում վաչեանը :

Նա կրկին կարդաց վէրաի նամակը և բոլո-

րովին պարզված դէմքով սկսեց իր սենեակում
շրջագայել ու շարունակել իր մտածումը :

«Ի՞նչ հրաշակի բան կը լինէր, եթէ վէրան
նախ իր սեփական ազատութեան վրա մտածելով
և իր իրաւունքների համար կոիւ մլելով յաղթող
հանդիսանար և միայն դրանով չը բաւականա-
նար :

«Երանի թէ նրանում ինքնարերաբեր զարթէր
և զգացմունքը պաշտպանել ամբողջ մի հասարա-
կութեան և ժողովրդի իրաւունքները ու նրանցից
լոված ազատութիւնը վերստին վերադարձնելու
համար կոիւ մզել : Ահա այն ժամանակ մեր սէրը
կատարեալ կը լինէր, գուցէ և յափտենական :

«Մինչեւ այսօր կարծես թէ ես սկսում էի
նրան մոռանալ, կարծես իմ դէպի վէրան տա-
ծած սէրս սկսում էր թուլանալ, նա իմ միտքն
ընկած միջոցին սիրտս էլ առաջվայ պէս սաստիկ
շէր բարախում :

«Իսկ այսօր այս նամակը կարծես ուժեղաց-
րեց սէրս . սիակ պատճառը, որ վէրան սկսել է
մտածել կնոջ ոտնակոխ եղած իրաւունքների
ճնշման և կաշկանդված լինելու վրա : Մնհատա-
կան ազատութիւնից դէպի հասարակականը միայն
մի բայլ է : Եւ եթէ այսօր վէրան ուզում է ինքը
ազատ լինել և իր տրամադրութեան համաձայն
ապրել, շատ հաւանական է որ վաղը կսկսի և
հասարակութեան մասին մտածել : Շատ լաւ է
որ այդ հարցասիրութիւնը ինքնիրան է ծագել
նրա զլիսում : Հիմա հարկաւոր է միայն երբեմն

ցնցել նրա ուղեղը և միշտ առիթ տալ, որ նա
շարունակ այդ հարցերով զբաղւի . . .

Վաչեանը վերցրեց թուղթ ու գրիչը, նստեց
և սկսեց գրել վերաի նամակի պատասխանը :

Թ

Օգոստոսի 22 էր. արեւը գեռ նոր էր ծա-
դում. բոցավառ հնոցի պէս իր կարմրորակ ճա-
ռագայթները սփռում իր շորջը և վարդի գոյ-
նով ներկում մօտիկից սահող ամպի արծաթա-
փայլ կտորները: Փշում էր մեղմիկ, զովարար և
փոքր ինչ խոնաւութիւն պարունակող զեփիւոը,
որը յատուկ է ծովափնեա երկրներին գարնան և
ամրան վերջերին: Վաչեանը թէեւ զարիթել էր,
բայց գեռ պառկած էր անկողնում, պատուհանը
բաց էր, ներս սուրացող զեփիւոը նրան մի
քիչ մրսեցնում էր, դրա համար էլ նա մեծ հա-
ճոյքով փաթաթվել էր հաստ վերմակի մէջ և
աչքերով հետեւում էր կարմրորակ ամպիկնե-
րին, որոնք զանազան ֆանտաստիքան ձեւեր
առած սահելով անցնում էին ջինջ երկնակամա-
րով:

Վաչեանը շատ լաւ տրամադրութեան մէջ էր

և զւարթ . . . նա իր ուրախ աչքերով հետեւում
էր վարդագոյն ամպիկներին և երազում . . .

Յանկարծ սենեակի գուռը բացվեց, շտա-
պով ներս մտաւ վաղինակը և վաղելով դէպի
մահճակալը դրեթէ ընկաւ վաչեանի կրծքին
ու ուրախութիւնից շնչառպառ լինելով՝ ա-
սեց.

— Եղաւ, պարոն վաչեան, Մինաս Եփէնտին
կէս ժամ առաջ սպաննուեցաւ:

Վաչեանը նախ իրան կորցրեց, ապա գուրս
թռաւ անկողնից և գժուածի նման սկսեց համ-
բուրել վաղինակին և խօսել.

— Սպանվեց հը՛, որեմն այսօր ամբողջ Պօ-
լիսը, Սուլթանը և ամբողջ մարդկութիւնը կի-
մանայ հայ յեղափոխական մարմնի գոյութիւնը.
Հնչին լորի կատրը, փոքրիկ ասեղը և մագնետի
ցլանկը այդ լուրը կայծակի արագութեամք կը
հասցնեն աշխարհի ամեն մի անկիւնը: Ամեն մի
հետաքրքիր մարդ կիմանայ որ արհամարված
հայը յեղափոխութեան է դիմում . . .

«Ուրեմն ստուկ հայը իր ձեռնոցը շպրտեց
թուրք կառավարութեան սռաջ, յայտարարեց
որ ստրկութիւնից ձանձրացել է: Հրաշալի օր:
Ո՞չափ երջանիկ ենք եղել . . .

«Այսօր նոր պատմութիւն է սկսվում հայու-
թեան համար, ստրուկ հայի զաւակը իր թուրիկ
ու գողդոջուն բաղուկով սպանեց լը դաւաճան
եղբօրը մէն մէնակ, օրը ցերեկով, իրը գիտա-
կից և ինքնաճանաչ յեղափոխական: Դժուարը

առաջինն էր . այսուհետեւ հեշտ է , գործը կը շարունակվի :

Վաչեանը ցուրտ զգաց և շտապ շտապ սկսեց հագնվել : Մինչ նա կը հագնվէր , վաղինակը ուրախ ուրախ պատմեց թէ ով էր այդ առաջին հայ յեղափոխական ահաբեկիչը . հայկական տէրիորիստների առաջընթաց կարապետը :

—Նա շատ յաջող և անյուսալի յանդղնութեամբ կատարեց իր գործը , աս'ց վաղինակը , բաւական չէ որ կատարեց , ինքն ալ ձեռք չանցաւ . պէտք է Պօլիսէն փախցունել զայն . թո՛ղ կառավարութեան ձեռքը չինայ , տպաւորութիւնը աւելի զօրեղ , աղդու և սարսափեցնող կըլայ թէ կառավարութեան , թէ հայ ժողովուրդին վրայ :

Վաչեանը իսկոյն համաձայնվեց այդ առաջարկին և ինչքան դրամ էր հարկաւոր առաջին հերոսին փախցնելու համար՝ յանձնեց վաղինակին : Վերջինս արդէն դռնից դուրս էր գնում , երբ վաչեանը նրան կանգնեցրեց , ասելով

—Վաղինակ ջան , չե՞ս կարող այդ երիտասարդին բերել ինձ մօտ . եթէ հնար է բեր , ինդրեմ , թո՛ղ տեսնեմ այդ բաջին , առաջին ահաբեկիչին . . . մեր ժանգոտած շղթաներին առաջին ուղղակի հարուածը հասցնողին : Ճշմարիտ , այդ երիտասարդը պաշտելի պէտք է լինի ամբողջ հայութեան համար . նա տուեց հայկական յեղափոխութեան հրգեհի կրակը . ճշմարիտ է մինչեւ հիմա էլ եղել են բոնութեան դէմ բողոք

քող հայեր , սակայն դրանք եղել են խմբովին և շփոթ գաղափարներով , կամ թէ չէ հանգամանք ներից անհատապէս նեղուած հայեր : Սակայն այս երիտասարդի բանը ուրիշ է . . .

«Հա , վաղինակ , կտրիճի անունը ի՞նչ է :

—Զարեհ , պատասխանեց վաղինակը . շատ լաւ , եթէ հնար ըլլայ կը բերեմ :

—Բեր , բեր , արգեօ՞ք վախ չէ զգացել , ի՞նչ է ասում , հարցրեց վաչեանը :

—Կըսէ որ երբ առաջին անգամ տեսեր է Մինաս Էֆէնտին , ձեռքը սկսեր է գողալ , սիրտը բարախիլ . խիղճը արթնցեր ու սկսեր է տանջել . բայց վերջը յիշելով իր տուած պատոյ խօսքը , շրթունքները սեղմելով մօտեցեր է , ծրարով վըճռագիրը յանձներ է , ու ատրճանակը ուղղակի կուրծքին պարպեր :

—Կեցցես , Զարեհ , ես նրա հոգուն մատաղ բացականչեց վաչեանը , ապա շարունակեց աւելի հանդարտ .

«Դէ գնա վաղինակ ջան , գնա , ամեն միշոց գործ գիր Զարեհին ազատելու , ափսոս է որ այդպիսի երիտասարդը հենց առաջին գործով զոհ գնայ :

Վաղինակը գնաց . Վաչեանը չը գիտէր ուրախութիւնից ի՞նչ անէր . . .

Այդ բոպէին ներս մտաւ տանտիրուհին սուրճը ձեռքին :

Վաչեանը ուրախ ուրախ գիմաւորեց տիկնոջը , հարցրեց նրա առողջութիւնը և մինչեւ

այնտեղը հասու որ տիկինը խնդրեց իր հետ
միասին սուրճ խմէ :

Մանկամարդ տիկինը մնացել էր շւարած . չը
պէտք է մոռանալ ասելու որ տիկինը հիմա շատ
էր փոխված , նա թողել էր իր անտեղի նազանը-
ները , վաչեանից սկսել էր ակնածել , մի առան-
ձին յարգանք տածել գէպի նա . և նրա ներկայու-
թեամբ միշտ հեղ ու համեստ էր . նա էլ իր այ-
ցելութիւններով չէր ձանձրացնում վաչեանին և
հիմա նրա անսպասելի քաղցր վարմունքը տես-
նելով շնորհակալական մի քաղցր հայեացը զցեց
«սառէն պազ» երիտասարդի վրա , և անուշ ժպի-
տը փայլեցնելով իր մանկամարդ ու սիրուն շըր-
թունքների վրա , գնաց իրեն համար սուրճ բե-
րեց և նստեց վաչեանի դիմացը :

Վաչեանը սկսեց հաճոյախօսութիւններ և ան-
մեղ կատակիներ անել . տիկինը ժպտում էր և
համեստ , բայց աղու հայեացքներով վարձատրում
յանկարծակի սոխակ դարձած վաչեանին :

Վերջապէս տիկինը էլ չը համբերեց և ուղիղ
վաչեանի երեսին , աչքերի մէջ նայելով ասեց .

— Այս ինչ փոփոխութիւն է , պարսն վաչ-
եան , ծշմարիտ կը զարմանամ կոր , որչա՞փ ու-
րախ ու զուարթ էք այսօր : Չեր աչքերուն մէջ
չը կայ սովորական սիրտ պաղեցնող նայուացքը :
Ի՞նչ ունիք :

— Այսօր ես շատ ուրախ եմ , և կարծես աշ-
խարհիս ամենաերջանիկ մարդկանցից մէկը , գու-
ցէ և միակը . . .

«Դրա համար էլ ուղում եմ որ ամենքն էլ
ուրախ լինեն , բոլոր մարդիկ , ամբողջ աշխարհը . . .

— Եակայն այդպիսի մեծ երջանկութիւնը .
անշուշտ պատճառ մը ունի :

— Պատճառը ինքս էլ չը գիտեմ , տիկին Աստ-
ղեկ , հենց այնպէս , առանց պատճառի , գիշերը
շատ լաւ երազ տեսայ . ուրախ զարթեցի , ու-
րախ վեր կացայ անկողնիցս և ուրախութեամբ
սուրճ եմ խմում ձեր հաճելի ներկայութեամբ . . .

Տիկին Աստղիկը ժպտաց և գլուխը օրօրեց
կասկածանքի նշանով , նա վաչեանին էլի մի բա-
ժակ սուրճ առաջարկեց . վերջինս ուրախութեամբ
համաձայնվեց խմելու :

Տիկինը գնաց սուրճ բերելու : Այդ միջոցին
ներս մտաւ Ասլանը և հրճւանքով բայց կամա-
ցուկ ձայնով ասեց .

— Մինաս էֆէնտին զարնուած է . Պօլիս ի-
րար է անցեր , կնքուած վճռագիրը անցեր է կա-
ռավարութեան ձեռքը . իսկոյն Սուլթանին ի-
մաց տուեր են . վերջինս հրամայեր է ամեն մի-
ջոց ի գործ գնել , ամեն ճիգ թափել ձերբակալե-
լու դաւադիրները : Հայերն ալ հասկցեր են գոր-
ծին էութիւնը . կը հրճուին . . .

— Գիտեմ , Ասլան ջան , գիտեմ , ասեց վաչ-
եանը , մի քիչ առաջ վաղինակը այստեղ էր . ա-
մեն բան պատճեց , երիտասարդի անունը Զարեհ
է , ախ , ես նրա հոգուն մեռնեմ , պաշտել պէտք
է նրան , պաշտել : Չես իմանում թէ որչափ ու-
րախ եմ , քիչ է մնում խենդանամ . . .

— Հը , ատ ի՞նչ է , ալ խիղճդ չի տանջե՞ր :
Կը յիշե՞ս որոշումը տրուած գիշերը . . .

— Թո՞ղ , Աստուած սիրես , Ավան , այսօր
ամեն բան լաւ է , խիղճս էլ , սիրտս էլ , հոգիս
էլ հանգիստ են . . . Զէ՞ որ ժողովրդի հարա-
զատ ու պարզ զաւակը ատրճանակի մի հարուա-
ծով յայտարարեց հայկական յեղափոխութեան
պաշտօնական սկզբնաւորութիւնը . . .

Տիկինը սուրճը ներս բերեց , երիտասարդները
խօսքը փոխեցին , տանտիրուհին այդ զզաց և
խոկոյն դուրս գնաց :

Երկու բարեկամները շտա զով սուրճը խմե-
ցին և տանից դուրս եկան :

Փ

Մինաս էֆէնդու սպանման օրից անցել էր
մօտ մի ամիս : այդ ժամանակամիջոցում հայ
յեղափոխական մարմինը մահուան էր դատա-
պարտել երկու մարդու էլ : Դրանցից մեկը հայ
հոգեւորական էր :

Դարերով ստրուկ , թէ մարմնով թէ հոգով
կաշկանդված , կրօնամոլ ու չափից դուրս հեղ ,
զրեթէ ոչխարի չափ հեղ , հայ գիւղացին ձեռք
էր բարձրացրել և հայ հոգեւորականի վրա :

Հոյ գիւղացու միշտ արտասւաթոր աչքերից
ընկել էր հաստ կեղեւը և այժմ նա տեսնում ու
զգում էր , որ միշտ ազօթքներ մրմնջացող , ու-
րեշի մեղքերին թողութիւն տևող , միշտ Աստու-
ծու և հրեշտակի անունով իրուղ հայ հոգեւո-
րականների մէջ կան , նղել են և գեռ կարող են
լինել շատ ցած արտրածներ . . .

Սթափված ստրուկը հենց աչքերից կեղեւը
ընկած առաջին վայրիկեանում՝ վճռեց հարուածել
և իր վատ հոգեւորականին , որին վիճակված էր
դարերի ընթացքում տէր լինել հայի Հոդու , որր-
ուի և մարմնու . տէր լինել և նրան կառավարել
իր կաստայական շահերին համաձայն . . .

Վճռեց և արեց : Հայ ժողովուրդը ցնցվեց .
նա առաջին անգամ էր տեսնում այդպիսի մի
հալուած հայ հոգեւորականութեան , ցնցվեց
բայց չը հայոյեց , չը քարկոծեց սեւ վերարկու
հագնողների վրա ձեռք բարձրացնողին . . .

Ընդհակառակը , կարծես թէ հայ ժողովուրդը
ուրախացաւ և մտածեց . — ախսոս որ մի քանի
տասնեակ տարի առաջ չեղան այս հարուածները :

Թուրք կառավարութիւնը տեսնելով մինչեւ
այդ օրը մոլեռանդ համարված հայ ժողովրդի
անտարբերութիւնը դէպի իր անարգված հոգեւո-
րականը՝ շւարեց և զգաց որ հայ ժողովուրդը
ամբողջովին յեղափոխութեան սեմի վրա է զըտ-
նվաւմ . . . Այդ զգաց և կատաղեց : Լարեց իր
ոստիկանութիւնը և վճռեց շուտով խեղել նո-
րածին հայկական յեղափոխութիւնը :

Ակավեցին ձերբակարութիւնները , և տանչանքները . սկզբում ապարդիւն — վերջապէս թուրք Շոստիկանութիւնը առաւ դաւադիրների հոտը և կամաց կամաց մօտենում էր Ասլանին , վաղինակին և վաչեանին :

Մրանք բոլորն էլ վտանգված էին և սպասում էին որ շուտով կը ձերբակալվէին . Նրանք իրանց եռանգը կրկնապատկած՝ ամեն ճիդ թափում էին գործը հաստատ հողի վրա դնել :

Մի գիշեր վաչեանը իր սենեակում նստած ընկել էր սեւ խորհրդածութիւնների մէջ . նրա սիրտը ճնշվում էր երբ պատկերանում էր բոլոր ընկերների ձերբակալումը և յեղափոխական գործի ընդհատումը այն միջոցին , երբ հայ ժողովուրդը զարթել էր , համակրում էր , սկսել էր դրամ տալ , այն միջոցին երբ կազմակերպութիւնը իր աներեւոյթ հերոսներով սարսափ էր ազգել վատ հայերի և թուրք կառավարութեան վրա և անձանօթների համար մէջ զօրել մարմինն էր . . .

Վաչեանը այդ մտմտուքի մէջ էր երբ ներս մտաւ Ասլանը և սաստիկ տիսրած յայտնեց .

— Վաղինակը ձերբակալված է , բոլորս ալ մատնված ենք , զիս կը վնտուն , ձեր անունն ալ գիտեն , սակայն ձեր գէմքը անձանօթ է և չը գիտեն թէ ուր էք : Պէտք է շատ զզոյշ ըլլաք շուտով Պօլակն հեռացէք :

— Ոչ , պատասխանեց վաչեանը յուզված՝ ես չեմ փախչի , եթէ գէմքով չեն ճանաչում ես

տունս կը փոխեմ , կը փոխեմ և անունս ու այնպէս կը շարունակեմ ապրել :

« Շատ ցաւում եմ որ Վաղինակը բռնվել է , այդ մեզ համար մեծ կորուստ է :

« Պահվեցէք դուք , Ասլան , աւելի լաւը հեռացէք : Դուք տեղացի էք և շատ կարեւոր ուժ , գուցէ և անփոխարինելի : Ինձ նմանները շատ կան Ռուսաստան , գուցէ և աւելի լաւերը , ինձ հետ մի բան պատահած դէպքում իսկոյն կը փոխարինեն : Բայց ձեզ փոխարինող գտնելը գժուար է : Իբրեւ ընկեր և իշխ եղբայր , խընդրում եմ միայն գործի օգուտը աչքի առաջ ունեցէք և առանց մի վայրկեան կորցնելու հեռացէք Պօլակից : Դէ՛հ եկէք համբուրգենք : Հանգիստ եղէք . ես ամեն միջոց , ինչ որ կարող եմ երրօտարական , գործ կը դնեմ ձեռք չընկնելու :

Ասլանը ուզում էր պատասխանել , բայց վաչեանը նրան խօսելու ժամանակ չը տուեց : Նրանք համբուրգեցին և գրեթէ լացով բաժանվեցին :

Ասլանը կրկին մօտեցաւ վաչեանին , պինդ պինդ համբուրեց և աջողութիւն մաղթելով հեռացաւ իր ընկերոջից , ո՞վ գիտէ մէկ էլ երբ տեսնելու ցանկութեամբ . . .

Ասլանի գնալուց յետոյ՝ Վաչեանը յուզված ու խռովված երկար ու բարակ շրջագայեց իր սենեակում և մի տասնեակ սիգարէտ մէկը միւսից ետեւից ծխեց : Սենեակը մխով լցվեց . վաչեանը չէր երեւում թանձր մխի մէջ :

վերջապէս նա մօտեցաւ սեղսնին, վեցրեց
թուղթ ու գրիչ և գրեց հետեւեալ նամակ-
ները .

Սիրելի ընկերներ .

Անշուշտ մինչեւ հիմա հեռագիրը ամենքիդ
իմացրած կը լինի մեր գործի աջող սկզբնաւո-
րութիւնը և շարունակումը : Սակայն այդ եր-
կար չը տեսեց : Սկսվեցին ձերբակալութիւնները
և խստութիւնները :

Մեր սիրելի վաղինակը արդէն ձերբակալ-
ված է, Ալանին փնտում են և նա պէտք է
հեռանայ : Ինձ էլ են փնտում, սակայն միայն
անունով . գէմը չը դիտեն : Ես չեմ հեռանալու,
կը մնամ մինչև վերջ . . .

Ընտրեցէք մէկին, որ ինձ հետ դժբախտու-
թիւն պատահած միջոցին իսկոյն տեղս անցնի,
որ դործը չընդհատվի :

Հանդիստ եղէք, ես իմ պարտքս կը կատա-
րեմ սրբութեամբ . . .

Հին հասցէնովս նամակ չը դրէք . առայժմ
ապահով հասցէ չեմ կարող տալ :

Չեմ ատում ցը գրութիւն կամ ցը տեսութիւն,
ով դիտէ ինչ կարող է պատահել :

Յամենայն դէսս ես զոհ եմ և ուրախ . համ-
բուրում եմ բոլորիդ :

1890 Սեպտ.

Պոլիս

Լէօն

Վաչեանը այդ նամակը վերջացնելուց յե-
տոյ՝ մի քիչ մտածեց և մի նամակ էլ գրեց
վէրախն .

Սիրելի վէրա,

Կեանքիս ընթացքը ինձ համար էլ որոշ չէր,
երբ ես ըեզ սիրեցի և չեմ զջում : Սիրեցիր և
գու . և երբ մենք անուշ զրուցելով, մեր ապագայ
կեանքի վարդագոյն ծրագիրներն էինք կաղմում,
յանկարծ իմ աչքերը բացվեցին, մարդիկ ինձ
համոզեցին որ հայ երիտասարդի համար ա-
մօթ է իր սեփական կեանքի վրա մտածել ու
հոգալ, երբ իր միլիօնաւոր հարազատ եղբայր-
ները տանջվում են տաճկական լծի տակ : . . .
Ես սիրեցի և Հայրենիքս : Ես զգացի իմ բարե-
կամներիս իրաւոցի լինելը և երկար ու բարակ
դատելուց ու կըուելուց յետոյ վճռեցի գնալ այն
տեղ, ուր ինձ հրաւիրում էր իմ քաղաքացիա-
կան պարտքը :

Ճշմարիտ է սկզբներում ինձ համար գժուար
էր որոշել թէ իմ սրտում որն էր աւելի զօրեղ,
քո՞ սէրը թէ Հայրենիքի սէրը և քաղաքացիա-
կան պարտաճանաչութեան զգացմունքը : Առաջ
երկումն էլ ինձ հաւասար էին երեւում . իսկ
այսօր կարծես Հայրենիքի սէրը և պարտաճանա-
չութիւնը աւելի զօրեղ են իմ մէջ :

Սակայն սիրում եմ և քեզ, ուրեմն սիրելի

վէրա , սպասիր եթէ կարող ես , իսկ եթէ
ոչ , ես քեզ ազատուս եմ ինձ տուածդ լսու-
քից . . .

Քո յիշատակը միշտ վառ կը մնայ իմ ուր-

տում :

Սեղմում եմ ըս ձեռքը և խնդրում էլ նամակ

Հը գրես . . .

1890 սեպտ.

Լէօն

Պոլիս

ԳԵՐՋ



ԳԻՆ և ՑՐԱՆԳ

Ժ.

Կայուն

2528

2529

2530

2013

